



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

591

Հ - 88

Գ. ԼՈՒՅԵՎԻՆ

ԲԱՐԻԹԵԱՆ  
ԵՐԿՈՒ ՄԵԾ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՏՐԱԺՈՒԹ

ՓՈԽԱԴՐԵՑ ՅԱԿՈԲ ՔԱԶԱՄԱ ԱՇԽԱՆ

6226



Ա. ՊԵՏԵՐԻԱՆԻ

Առաջինական արտադրություն Հայաստան պատճեն

1905

2010

"B 2002

4974 591

L-89 Վ. 10 Խնկեզի Զ.

530 ԱՐ  
54-L0

Բ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ԵՐԿՐԻ ՄԵԾ ԹԱԳԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1002  
6356

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ

ՓՈԽԱԴՐԵՑ ՅԱԿՈԲ ՔԱԶԱՆԱՅ ՍԱՐԻԿԵԱՆ.



Ս.-ՊԵՏԵՐԲՈՂԻՐԴ

«Պուշկինեան արագատիպ» Հայկական տպարան


1903

Дозволено цензурою. С.-Петербургъ, 6 Ноября 1902 года.

30083-4. 4

14486-5

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



Մեր Երկրի Երեալ բռնում են  
երկու մեծ թագաւորութիւններ. դրան-  
ցից մինը բոյսերի, իսկ միւսը կենդա-  
նիների թագաւորութիւնն է. զո՞նէ այդ  
անունով է մկրտել մարդը Երկրի վրայ  
ապրող բոլոր բոյսերին և կենդանիներին միասին  
առած: Խիստ ընդարձակ և բազմատեսակ են այդ  
անթագաւոր թագաւորութիւնները, որքան զեղեց-  
կութիւն և փարթամութիւն կայ գրանց մէջ, որքան  
փայլուն և բազմազան են զրանք: Թէ բոյսերի, թէ  
կենդանիների իւրաքանչիւր տեսակն իր յատուկ  
ձեր, կազմը, գոյնը և նիստ ու կացն ունի: Երեա-  
կայեցէք... զիտնականների ասելով մեր Երկրի  
վրայ մօտ 400,000 տեսակ բոյսեր կան. կատակ  
էք կարծում...

Գիտնականները դեռ շատ վաղ ժամանակնե-  
րից սկսած աշխարհի զանազան մասերում ճանա-  
պարհորդելով, ամեն տեսակ բոյսեր են ժողովել՝ ի-  
մանալու թէ նրանք որտեղ և ի՞նչպէս են աճում,  
ի՞նչպէս են կազմուած, ե՞րբ են ծաղկում և ի՞նչ  
քանի կարող են պէտք գալ. բայց դեռ մեծ աշխա-

տանք է հարկաւոր, որ կարողանան գտնել և ուսումնասիրել բոյսերի այն բոլոր տեսակները, որոնք փռուած են աշխարհի երեսին և ապրում են երբեմն խուլ և անմատչելի տեղերում:

Հարուստ և բազմատեսակ է բուսական թագաւորութիւնը. սակայն պակաս չէ նաև կենդանականը. միմիայն միջատները մօտ 150,000 տեսակ են հաշվում. իսկ թռչունները գիտնականների ասելով մօտ 10,000 տեսակ են, որոնցից 5000 հասակով նոյնքան փոքր են, որքան ծտերն ու կարմիր կտուարները (պեղլյատ), հապա դեռ որքան կենդանիներ էլ կան, թէ մեծ, թէ փոքր, թէ ընտանի, թէ վայրենի, թէ խոտակեր, թէ դիշակեր, թէ շրային, թէ ցամաքային: Չնայելով իրենց ջանքերին, այնուամենայնիւ ուսումնականները դեռ չեն կարողացել ծանօթանալ բոլոր կենդանիների կազմի և կեանքի հետ: Զէ՞ որ մի թռչուն, մի միջատ, կամ մի գազան նոյնը չէ, ինչ որ մի շիւղ, մի թուփ, կամ մի ծառ կարող է լինել. մի բոյս ուսումնասիրեն անհամեմատ աւելի հեշտ է, քան թէ մի կենդանի, որին գտնելը, բանելը կամ սպանելը ահազին դժուարութիւն է պահանջում: Այս, մի հետաքրքիր բոյս կամ կենդանի գտնելու համար մարդը ահազին ժամանակ, մեծ ջանք, ոյժ, քաջութիւն և խելք է դրել և պիտի դնէ:

Խսի՞ ասես, որ չէ ենթարկւում ու դիմանում

այն ճանապարհորդը, որ հեռու երկիրներ է դնում՝ այնտեղ ապրող բոյսերի հետ ծանօթանալու համար: Նա մեծ արիութիւն պիտի ունենայ, որ կարողանայ մտնել մթին ու անանցանելի անտառները և սողալ անմատչելի ժայռերի վրայ, որտեղից նա ամեն բոպէ կարող է պոկուել ու անդունդ գլորուել, նա պիտի բնութեան իսկական սիրահար, նուիրուած գիտնական կամ կամ ճանապարհորդ լինի, որ կարողանայ թափանցել լեռների խորքը, մանել ստորերկեայ մթին այրերը, օրերով լողալ շրերի երեսին, դիմանալ ցրտի ու քաղցի, կամ ամիսներով ապրել բաց երկնքի տակ, մի խոր անտառում, մարդկային բնակութիւնից հեռու, հազարաւոր պատահարների ու վտանգների մէջ: Եւ իսկական գիտնականներն ու ճանապարհորդներն այդ արել են. արել են ոչ թէ բռնի կերպով, այլ որովհետեւ բնութիւնը սիրել են և ցանկացել են աշխարհին ճշմարտութիւններ հաղորդել հեռու երկրների և նրանցում եղած բոյսերի ու կենդանիների մասին: Բայց այդ ձեռնարկութիւնները միշտ էլ յաջողութեամբ չեն պսակուել. թէ հայրենի, թէ օտար երկրներում շրշելիս շատերն են ընկել, նահատակուել: Եւ այդ մարդկանց խելքի, աշխատութեան ու քաջութեան չնորհիւ յաջողուել է իմանալ, թէ մեր երկրի վրայ ի՞նչպիսի բոյսեր ու կենդանիներ կան, դրանց տեսակները որտեղ են գտնւում: ինչպէս են ապրում և ինչով են տարրեր-

տում երարից: Այսպէս թէ այնպէս՝ յայտնի է, որ մեր երկրի վրայ առնւազն 800,000 տեսակ բջսեր և կենդանիներ են ապրում: Նրանք գտնւում են թէ զում, թէ յամաքի վրայ, անտառներում, անապատներում լեռներում, ովկիանոսներում, ծովերում, լճերում, գետերում և լեռնային վտակներում: ապրում են օդում, հողի վրայ, նոյնիսկ հողի տակ.— այրերում, ստորերկրեայ աղբիքներում և լճերում: Այժմ ով կարողանայ համարել և իմանալ թէ ընդամենը քանի՞ հատ բոյս կամ կենդանի է ապրում երկրագնդի վրայ, նրան կտրիծ կասեմ, բայց այդ անկարելի է: Ինչպէս որ երկնքի աստղերն ու ծովի աւաղը չի կարելի համարել, այնպէս էլ այդ բոյսերն ու կենդանիները չի կարելի հաշուել: Նայեցէք իիտ բուսականութեամբ ծածկւած շքեղ մարդագետնին կամ մի քանի հազար վերստ երկարութիւն և 3—400 վ. լայնութիւն ունեցող չամի անտառներին. Նայեցէք քամուց քշող մորեխի խմբերին, որոնք թռչելիս նոյնիսկ արևի ճառագայթներն են խաւարեցնում: վերջապէս նայեցէք մի քանի ծովերի ափերում լողացող անթիւ փայլունիներին (ըելման). Նայեցէք այդ բոլորին և դուք անմիտ կանուանէք նրան, ով կփոքձէ երկրի վրայ ապրող բոյսերն ու կենդանիները համարել: Եթէ կենդանիների մի տեսակից (օր. մորեխ) մի տեղ միխօններով են ժողովւում, եթէ 2—3 տեսակ ծա-

ռից մի անտառում միլիօններով կարելի է տեսնել, ուրեմն բոլոր տեսակներից որքան բոյսեր ու կենդանիներ կարող են լինել. այս հարցին պատասխան չը կայ, չի էլ կարող լինել:


Անշուշտ դուք շատ անգամ լսած կ'լինէք, որ զանազան երկրների բոյսերն ու կենդանիները նման չեն իրար. օրինակ տաք հնդկաստանի անտառներում բուսնում են այնպիսի ծառեր, թփեր ու խոտեր, որոնք մեր երկրում չկան, այնտեղ ապրում են փղեր, առիւծներ, կապիկներ, թութակներ, մի խօսքով այնպիսի կենդանիներ, որոնց մեր երկրում երբէք չէք պատահիլ, այս ի՞նչիցն է. Հարցը շատ հետաքրքիր է. այդ պատճառաւ արժէ հանգամանօրէն պարզել. թէ այս կամ այն կենդանին կամ բոյսը որտեղ է ապրում և թէ ինչու նրանք մի երկրում այսպէս և մի այլ երկրում այնպէս են:

Մեր երկիրը մի մեծ գունդ է, որ բաժանում է 2 կիսագնդերի—արևելեան և արևմտեան. արևելեան կիսագնդում գտնւում են չորս մեծ ցամաքներ՝ Ասիա, Աֆրիկա, Եւրոպա և Աւստրալիա: Եւրոպայի աջակողմեան մեծ մասը և Ասիայի վերին մասը միասին կազմում են Ռուսաց կայսրութիւնը: Արևմտեան կիսագնդում գտնւում է հինգերորդ մայր ցամաքն՝ Ամերիկան: Երկրագնդի մասցած մասը չուր է, որ կազմում է հինգ մեծ ովկեանոսներ և մի քանի ծովեր:

Երկրի վրայ տաքութիւնն ամեն տեղ միատեսակ չէ. նրա միջին մասը, որ գոտու պէս պատում է նրան, ամենից տաք է. այս մասը Երկրագնդի տաք գոտին է, որտեղ զփիտեն թէ ինչ է ձմեռ, իսկ ձիւն միայն ամենաբարձր սարերի գագաթներին է Երեռմ: Այս գոտուց դէպի հիւսիս և հարաւ գանրում են, Երկրագնդի Երկու այլ մասերը—հիւսիսային բարեխ առն և հարաւային բարեխ առն գոտիները: Հէնց «բարեխառն» խօսքը ցոյց է տալիս, որ արեն այստեղ այնպէս չէ այրում, ինչպէս տաք գոտում: այստեղ բաւական ցուրտ ձմեռուան հետեռմ է գարունը, ապա տաք ամառն և յետոյ խոնաւ և անձրես աշունը: Բոլորովին այլ է տաք գոտում: այդտեղ ամբողջ տարին ոչ գարնան է նման և ոչ ամառուան: Եւրոպայի բոլոր տէրութիւնները—Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիաստան, Իտալիա, Անգլիա, Աւստրիա և այլն գտնւում են բարեխառն գոտում: Բարեխառն գոտիներից դէպի հիւսիս և հարաւ ձգւում են Երկրագնդի հիւսիսային և հարաւային ցուրտ գոտիները. այդ Երկներում-օր. Սիրիում, Համարեա ամբողջ տարին Երկարատե ձմեռ է. լինում են սարսափելի ցրտեր, ձիւնը երբեք չէ հալում. չկայ այստեղ ոչ ծաղկաբեր գարուն, ոչ անձրես աշուն: Երկար՝ 10—11 ամիս տեղող ձմեռուան յաջորդում է կարճատե ամառն. Եթէ տաք գոտին մշտատե գարնան թագաւորութիւն է, այս-

տեղ էլ անվերջ սառնամանիքի, ցրտի ու սառուցի թագաւորութիւնն է:

Այսպէս ուրեմն ամբողջ Երկրագունդը կարելի է բաժանել հինգ գոտիների—մէկ տաք կամ այրեցեալ, Երկու բարեխառն—հիւսիսային և հարաւային և Երկու ցուրտ կամ սառուցեալ՝ դարձեալ հիւսիսային և հարաւային:



Նկ. 1. Կիսագնդեր:

Այժմ աեսնենք, թէ ինչ կերեայ մեր աչքին, եթէ հիւսիսային ցուրտ Երկներից աստիճանաբար ինենք, դէպի տաքը:

Բնութիւնը Սիրիրի հիւսիսային ափերում շատ աղքատ է. ինչ կայ այդ տեղ—միայն մամուռ, քարաքոս (լիշայնիկ) և ինչ որ ողորմելի փոքրիկ թփեր, որոնք Երեմն Երեռմ են մեռած, ձիւնապատ տարածութեան վրայ. ահա այդ մերկ

Երկրի ամբողջ հարստութիւնը: Բայց փորձեցէք մի փոքր հարաւ իշնել, ուր աւելի տաք է, այստեղ դուք նախ տեղ-տեղ ծառեր կտեսնէք, իսկ մի փոքր հեռւում նաև մշտադալար, վշատերև անտառներ, որտեղ այսպէս, թէ այնպէս կեանք էլ կը տեսնէք: Սա հիւսիսային ափերին նման չէ, ուր միայն սպիտակ արջեր, փոկեր (тиолень), ծովացուլեր (моржъ) և մի քանի տեսակ թռչուններ կան: Այստեղ ուրիշ շատ տեսակ կենդանիներ էլ են ապրում:

Բայց որքան աւելի մօտենաք երկրագնդի տաք գօտուն, ճանապարհին այնքան աւելի շատ տեսակ բոյսեր ու կենդանիներ կպատահեն: Այդտեղ արդէն տերեւաշատ, սաղարթախիտ անտառներ կան, որոնց մէջ թփերով ու բաղմատեսակ խոտերից հիւսուած կանաչ գորգերով ծածկուած մեծ դաշտեր մարգագետիններ են երեւում: Թէ այդ դաշտերում և թէ մարգագետիններում երեւում են շատ տեսակ գաղաններ, հնչումէ երգող թռչունների ծլլոցը, լուռում է նշյն իսկ ամենափոքրիկ կենդանիների բզդոցն ու ճոռոցը:

Աւելի հարաւ շարժուելով դուք կընկնէք երկրի ամենատաք գօտին:

Որպի՞սի հարստութիւն ու բաղմատեսակութիւն... Ի՞նչ փայլ ու ճոխութիւն... ոչ մի տեղ դուք այսքան բաղմաթիւ բոյսեր ու կենդանիներ չեք տեսնիլ. զարմանալի են զրանք իրենց տեսքով,

կազմուածքով, փայլով ու գեղեցկութեամբ: Այստեղ ապրում են գաղանների ամեն տեսակներ—հսկայ և գաջաչ, ուժեղ ու գեղեցիկ. կատաղի ինչպէս վագրը և բարեհամբոյր ինչպէս փիղը. ծառերի կանաչ աերեների մէջ փայլում են գցն-գցն թռչունների անթիւ խմբեր. խիտ ու բարձր խոտերի մէջ թագնուած են ամեն տեսակ օձեր, խլէզներ, գորտեր... օղի մէջ թռչուում են գոյնզգոյն թիթեռներ, ճանձեր, մոծակներ, ճպուռներ և ոսկէգոյն բղէզներ: Մի խօսքով՝ տեսակների այսպիսի ճոխութիւն, բազմութիւն ու հարստութիւն ոչ մի տեղ չկայ: Իսկապէս տաք գօտին մի մոգական, առասպելական աշխարհ է:

Եւ այսպէս՝ պարզ է, որ բոյսերին ու կենդանիներին կեանք տւողը տաքութիւնն է. բայց երկրագնդի բոլոր գօտինները միատեսակ չեն տաքանում, դրա համար էլ բոյսերի և կենդանիների տեսակներն ամեն տեղ միատեսակ բաղմաթիւ չեն. զրանց թագաւորութիւնն այնտեղ է աւելի ճոխ, որտեղ աւելի տաք է: Բայց միթէ միշտ այդպէս է. միթէ որտեղ տաքութիւնը միատեսակ է, այնտեղ բոյսերն ու կենդանիներն էլ են միատեսակ.—տեսնենք: Ամեն կենդանի, ինչպէս և ամեն բոյս, այնտեղ է ապրում; որտեղ աւելի յարմարութիւններ է դանում. որտեղ նրա համար հարկաւոր քանակութեամբ կեր, լոյս և տաքութիւն կայ, որտեղ նա աւելի քիչ թշնամիներ ունի. ուրեմն միայն տաքութիւնը բաւական չէ.

օրինակ՝ Աֆրիկայի մեծ մասը, Աւստրալիայի կեսը  
և Ամերիկայի միջին կտորը տաք գոտում են ընկած.  
բայց այդ տեղերում բցյաերն ու կենդանիները  
նման չեն իրար. Աֆրիկայում ապրող երկարապա-  
րանոց և երկարոտն ընձուղախն (շիրափփա) ուրիշ  
ոչ մի երկրում չէք պատահիլ.

Իսկ բիզոններ.

կամ վայրի ցու-  
լեր միմիայն Ամերի-  
կայում կարելի է  
տեսնել. Աֆրիկայում  
փղեր կան, որոնցից  
չկան Ամերիկայում.  
Աֆրիկայի անտառ-  
ներում ապրում են  
մարդակերպ շիմպան-  
զե և գարիլլա  
կապիկներ. զբանցից  
չկան Ամերիկայում.




Նկար. 2. Ընծուղտ.

մինչեւ այստեղ վիստում են մի տեսակ կեռ պոչով  
կապիկներ, որոնց երբեք չէք հանդիպիլ Աֆրիկայում:  
Իսկ ինչ վերաբերումէ Աւստրալիային, այդ մասին  
կը խօսնեմ մի այլ զիսում; որովհետեւ այդաեղի բոյ-  
սերն ու կենդանիները միանդամայն տարբեր են:

Տաք գոտում—օրինակ Աֆրիկայում, այնպիսի  
մեծ տարածութիւններ կան, ուր ոչ մի բոյս, ոչ


մի կենդանի չկայ. մինչդեռ 50-100 վ. հեռաւորու-  
թեան վրայ ձեր առաջ բացւումէ մի ծաղկաղարդ  
վայր, ուր թէ ծառեր կան, թէ կենդանիներ են  
ապրում. պարզ է ուրեմն, որ միայն տաքութիւնը  
բաւական չէ.



Նկ. 3. Գարիլլա.

Կեր չկայ: Որտեղ բոյսերն առատ են, այնտեղ էլ հաճոյ-  
քով են ապրում այն բոլոր զազանները, թոշունները,  
միջաներն ու զեռունները, որոնք կերակրում են  
խոտով, փոքրիկ թփերի տերևներով յօղունով,

կլեպով, արմատներով, բոյսերի պառւղներով ու սերմերով, կամ ծաղիկների հիւթով ու փոշիով. ինչպէս՝ թիթեռ, մեղուն, բգեղը և այլն. Մի խօսքով՝ որքան մի երկիր հարուստ լինի բոյսերով, այնքան էլ բազմատեսակ կլինեն նրա կենդանիները, որովհետեւ բո-



Նկ. 4. Շիմպանզե.

լորն էլ կարող են իրանց համար սննդարար և համեղ կերակուր գտնել: Տէս որ ծաղկազարդ մարդագետինն ամայանումէ, իսկըն դադարումէ նրանում նաև կեանքը, որովհետեւ կենդանիներն իրենց համար կեր չդառներով, կամ սատկում, կամ հեռանումէն: Այժմեան բազմամարդ քաղաքներից և

գիւղերից շատերի տեղ հնումը խիտ անտառներ են եղել, որոնց մեջ բազմաթիւ կենդանիներ են ապրել. բայց մարդը եկել, ծառերը կտրտել և իրեն համար տեղ է բացել... չքացել են անտառները, չքացել են նաև նրանց միջի կենդանիները: Խ Խ

Նատ կենդանիներ էլ ոչ թէ բոյսերով, այլ իրենց նմաններով են կերակրուում: Պատռառող գաղանները— ինչպէս առիւծն ու վագրը խոշոր խոտակեր կենդանիներ են որսում: Գիշատող թռչուներն-ինչպէս

արծիւն ու բազէն, մեծ քանակութեամբ փոքրիկ չորքոտանիներ ու թռչուններ են ոչնչացնում: Նատ միշատներ, ինչպէս բգեղների ու ձանձերի միքանի տեսակներ, պատռառզնե-



Նկ. 5. Առիւծ:

րից ու գիշատողներից յետ չեն մնում և մեծ բաւականութեամբ խեղտում ու ոչնչացնում են ուրիշ միշատների, ասենք շատ անդամէլ իրենք են թռչունների ձեռքն ընկնում: Վերջիններս էլ օձերի համար բաւական համեղ պատառ են:

Տեսնումէք որքան բազմատեսակ է կենդանիների կերակուրը: Այդ կենդանիներից մի քանիսը խոտակեր են, մի քանիսը մսակեր, կան նաև միշատներով, հատիկներով և պտուղներով կերակրուղներ:

Շատ հասկանալի է—մի տեղ որքան կերը բազմատեսակ լինի, այնքան էլ կենդանիները շատ կլինին: Կանաչ մարգագետինը շատ լաւ ապաստան է խոսու հատիկներ ուտող կենդանիների և միջատների համար: Գաղանները խոտակերներին են ոչնչացնում, փոքրիկ թռչունները միշտաներին, սրանց էլ պատռումնեն գիշատողները, ինչպէս բաղէն և ուրուրը: Ահա այսպէս է կենդանիների կեանքը:

Իւրաքանչիւր բոյս կամ կենդանի իւր կեանքով աշխատում է յարմարուել այն երկրի պայմաններին, որտեղ ինքն ապրումէ: Եթէ կաղնին անկենք հեռու հիւսիսում—ցրտերի ու սառնամնիքների հայրենիքում, նա կոճանայ, որովհետեւ այդ նրա տեղը չէ: Ինչպէս յայտնի է, սպիտակ արջը սովոր է ցրտի. նա իր օրերը սառցակցյացերի վրայ է անցկացնում, նոյն իսկ բոյնը ձիւնի մէջ է շինում: Փորձեցէք նրան տաք երկիր տեղափոխել և նա չի ապրիլ. ոչ տաքը, ոչ մարգագետնի կանաչը և ոչ էլ անտառի շուրջը նրան դիւր չեն գալ: Պետերբուրգի (ուր բաւական ցուրտ է) կենդանաբանական այդում սպիտակ արջեր կան, դրանց համար առանձին բնակարաններ են շինւած, որտեղ սառուց, ձիւն և սառն ջուր կան. միմիայն այդպիսի պայմաններում կարող է առողջ և աշխոյժ լինել այդ կենդանին:

Վերջապէս փորձեցէք տաք գօտու կապիկներին տեղափոխել Սիբիրի անտառները և նոքա այդտեղ

կ'կոտորուեն. հէնց Պետերբուրգում, ուր Սիբիրից անհամեմատ տաք է, նոյն իսկ ամենալավ խնամուած կապիկները շատ քիչ են ապրում: Սրանից 12 տարի առաջ այնտեղի կենդանաբանական այգում ես բաւական կապիկներ տեսայ. մի քանի մեծ վանդակներում էին. 9 տարուց յետոյ ես կրկին մտայ այդ այգին. այդ վանդակները համարեա գատարկ էին. իմ հարցին—թէ ինչ եղան կապիկները, պահապաններից մինը պատասխանեց.— «Է», պարոն, նրանք կոտորուել են. մեր երկիրը նրանց տեղը չէ. յուրա է... Ահա նրանց նեղացնողը... հիւսնդանում, տիրում, խեղճանում և քաշումնեն վանդակի մի անկիւնը ինչպէս, այն փոքրիկ կապիկը. և միքանի շաբաթից յետոյ կոտորւումնեն... խեղճեր...»:

1002  
9558

1448658  
2  
3  
7

Ցուրտ տեղում տաք հագուստ, մորթէ մուշտակ է հարկաւոր. հիւսիսում գաղաններն ու թռչունները ցրտին շատ լաւ են բնաելացել. այդտեղ գաղանները տաք մորթի ունեն, իսկ թռչունների մարմինը խիտ և փափուկ վառապէս քրիզին գրիմած:

Իսկ ուր տաք է, այսահետ մուշտակի բոլորովին կարիք չկայ: Աֆրիկայի տաք առաջանաւ է ամենամասն ամերիկական մերկ են և պակաս չեն բնաելացել իրանց գոլովի կիմային: Բայց ահա թէ հետաքրքիրն ինչն է—այդ մերկ չները ցուրտ երկրներում մաղուառ են. և ընդհակառակը—միքանի բրդոտ ոչխարներ, երբ տաք

Աֆրիկայ են լնկնում, բողորովին լերկանում, քաջանում են. ձիշտ այդպէս լերկանում են մեր ընտանի բագերը, երբ Ամերիկայի տաք մասերն են տեղափոխում. նրանց փետուրները թափում են. կարծես մինք դիտմամբ, ծաղրի համար լինի նրանց պլոկած:

Սյնպիսի կենդանիներ կան, որոնք հողի երեսին, լցու տեղում, յարմարութիւն չունեն ապրելու, որովհետեւ միւս կենդանիների զրանում իրենց համար բաւարար կերակուր ճարել չեն կարողանում. անշուշտ այդպիսիները պիտի աշխատեն այնպիսի տեղ գտնել, որտեղ ուրիշները դանաղան պատճառներով գեռ չեն հասել: Շատերդ դիտեք՝ այնպիսի բոյսեր կան, որոնք ապրելով հողի մէջ, նրա մակերևոյթից ցած, մեղ չեն երեսում: օրինակ սունկերի միքանի տեսակները: ձիշտ այդպէս միքանի կենդանիներ ել կան, ինչպէս օրինակ խլուրդը, որոնք հողի տակ են տեղաւորում: մի քանիսներն ել թագնուում են մթին այրերում: ինչպէս սողուններից, խեցգետիններից, ձկներից, միշտաներից շատերը:

Եյս բոլորն ի հարկէ աշխարհից յօժարակամ չեն հեռացել. նրանց քշել են կարիքն ու թշնամուց աղաս մնալու անհրաժեշտութիւնը. այդտեղ ապրող թէ կենդանիները, թէ բոյսերը հնար եղածին չափ յարմարուել են մթութեանը. ի հարկէ աչքերը մթնում միանդամայն աւելորդ են, դրա համար ել

այդ կենդանիները կամ բոլորովին կցը են կամ շատ փոքրիկ աչքեր ունեն, որոնք շատ թոյլ են տեսնում: Բայց այս գեռ բոլորը չեն. յայտնի է, որ տաք երկրներում, ուր արեն աւելի պայծառ լցու ունի, թռչունները, միշտաները և սողուններն աւելի գեղեցիկ են, քան թէ ցուրտ և բարեխառն գոտիներում ապրող



Նկար. 6. Խլուրդ:

իրենց ցեղակիցները: ձիշտ այդպէս ել միայն գիշերային մթութեան ժամանակ իրենց բներից դուրս եկող թռչուններն ու միշտաները աւելի հասարակ և համեստ հագուստ ունեն, քան թէ նրանք, որոնք իրենց կեանքն անց են կացնում արեւի տռի: Ցերեկուայ գոյնզգոյն թիթեռն անհամեմատ աւելի գեղեցիկ է գիշերային իր շատ ցեղակիցներից, որոնք

միայն մոխրագոյն կամ դորշ թևեր են ունենում։ Հասպա կարմրակատարի դժյնգոյն փետուրները որքան գեղեցիկ են դիշերային բուի դժգոյն փետուրներից։

Նոյնը բոյսերի համար կարելի ասել. հողի մէջ ծառերի ու թփերի ստուերներում և մթին այրերում թագնող բոյսերն ընդհանրապէս շատ դժգոյն են լինում։


Ուրեմն մեր ասածներից ի՞նչ է հետեւում—այն, որ զանազան երկրներում ապրող բոյսերն ու կենդանիները նման չեն իրար մասամբ նրա համար, որ այդ երկրների տաքութիւնը, կերակուրը և արևի լոյսը միակերպ չեն։ Բայց մի մոռանաք, որ այդ տարբերութիւնը միայն տաքութիւնից, կերակրից և լոյսից չէ կախուած։ ուրիշ պատճառներ ել կան, որոնցից մէկի մասին կխօսենք ստորեւ։

### III.

Անցնենք այժմ երկրագնդի բոլոր դօտիներով և տեսնենք, թէ կեանքը նրանցից իւրաքանչփուրում ինչ վիճակում է։

Ահա ձեղ հեռու, ցուրտ հիւսիսը—Սառուցեալ ովկիանոսն ու Ամերիկայի, Ասիայի և Եւրոպայի երկնամերձ ափերը. ամենուրեք ընդարձակ սառցային գաշտեր. ովկիանոսը աեղ տեղ միայն ազատ է սառցէ ծածկոցից, բայց այդ տեղերում էլ չը երե-


սին սառուցի ահագին շերտեր են երեսում՝ որոնք երբեմն մենակ, երբեմն էլ ահագին կցյտերով արեկի տակ փայլերով ու կայծեր արձակելով ծփում են ովկիանոսի ալիքների վրայ։ Ափերն էլ են ծածկուած ձիւնով ու սառուցով, մի խօսքով՝ սառուցի կատարեալ թագաւորութիւն է։ Բայց այստեղ էլ կեանք կայ։ Սառուցների մէջ, ալիքները հանդարտ պատ-



Նկար. 7. Կէտ։

ուելով, երբեմն չը երեսն անելով, երբեմն էլ տակն իջնելով, լողում է 15 սաժէնանոց ահագին կէ տը, Սյդ չը երի իսկական բնակիչն է սա, որ ովկիանոսի աւելի տաք մասերում շատ քիչ անդամ է երեսում։ Մի փոքր հեռուում լողում է երկրորդի, երրորդը, չորրորդը... որոնք բոլորն էլ որսի դուրս եկած, հագարաւոր մանր ձկներ ու ծովային կենդանիներ են ոչնչացնում։

Երբեմն ձիւնապատ ափերում, երբեմն կլողացող սառցակցյալների վրայ սպիտակ արշեր են բնակւում, այս կենդանիները թէ լաւ լողարներ, թէ լաւ ձկնորսներ են. նրանց սպիտակ ու խիտ մօր-



Նկար. 8. Փոկերի որսը:


թին ոչ միայն լաւ տաքացնում: այլ և փրկում է վտանգից և նպաստում է որաին գաղտնի կերպով մօտենալուն. շուրջը ձիւն ու սառցյ, իսկ ինքն սպիտակ. իսկ չէ սպիտակի վրայ սպիտակ առարկայ նկատեն այնքան էլ հեշտ չէ: Արշերի ամենասիրելի կերակուրը ձուկն է, բայց մեծ հաճոցով են վայե-

լում նաև մի ուրիշ կենդանի, որ նոյնպէս ցուրտ երկրի բնակիչ է. դա ծովային հորթը, փոկն է (ուոլեն): Փոկերն ապրում են խմբերով և լաւ լողալ ու սուզուիլ գիտեն. նրանք առաջին թաթերով թիավարում, իսկ յետիններով այս ու այն կողմն են դառնում, կերակրում են ձկներով, որոնց շատ ճարպիկութեամբ են որսում: բնաւորութեամբ շատ հանգիստ և բարի են, բայց ծցլ են և անշնորհք: Փոկերին մարդիկ կոտորում են փայտերով և այդ միայն այն ժամանակ, երբ նրանք կշացած, հանգստանում են:

Փոկի մորթին ու ճարպը լաւ զին ունեն, պրահամար էլ մարդիկ անխնայ կոտորում, ոչնչացնում են նրանց. սրան պակաս չեն հետեւում նաև սպիտակ արշերը. եթէ փոկը իր այս թշնամուն տեսնելուն պէս չկարողանայ չրի տակն անել, այնուհետեւ հազիւ թէ ազատուի նրա սուր ատամներից: Արջն իր հաշիւր նոյնքան հեշտ չի վերչացնում մի ուրիշ կենդանու՝ ծովացուլի (մօրխ): Հետ: Արտաքինով ծովացուլը նման է փոկին, բայց աւելի խոշոր, ուժեղ և չար է, սա էլ ցուրտ երկրների բնակիչ է և լաւ լողար ու ձկնորս է. յաճախ ափ էլ է դուրս գալիս, ուր ամբողջ ժամերով հանգիստ պարկում, քնումէ. ունի 5—6 արշին երկարութիւն. մարմինը մազու մօրթով է ծածկուած. թիականման թաթեր

և երկար ժանիքներ ունի. աշա՞ հէնց այդ ժանիքների համար է, որ մարզիկ որսում են նրան:

Սպիտակ արջեր, կէտ, փոկ, ծովայուլ—աչասոցի թագաւորութեան զինաւոր բնակիչներ:




Նկար. 9. Ծովայուլեր:

Սրանք բոլորն էլ կաթնասուններ են, որովհետեւ էղերն իրենց ձագերին կաթնով են կերակրում. փոքրիկ կէտը շան լակոտի պէս ծծում է մօր կաթը և միանդամայն սխտում են նրանք, որոնք կար-

ծում են թէ կէտը ձկների կարդին է պատկանում:


Ովկիանոսից այժմ անցնենք ցամաքի հիւսիսային ափերը: Սարերի փէշերում՝ ափերին մօտ,



Նկ. 10. Ձկնկուլ:

Նկ. 11. Հաւալուս:


Ժայռերի վրայ վիստում են միլիօնաւոր թռչուններ, որոնք շարք կանգնած զինորների նման ծածկում



Նկ. 13. Սուզակ:

Նկ. 12. Պինդպին:

են այդ ժայռերն ու ափերը: Ծովային ձկներւն էրն ահաղին խմբերով ձկներ որսալով են զրագուած. կայ նուե հաւալուսն (պելիկան), որ կտուցի տակ կախ բնկած մի պարկ ունի, որի մէջ



Նկար. 14. Տունդրա:

պաշարի համար ձկներ է պահում։ Քիչ չեն նաև նուրբ փետուր ունեցող սուզակները և ծիծաղաշարժ, թռչել վիմացող պինդվինները, որոնք թևերի փոխարէն կախ ընկած թալթիկներ ունեն։ այդ թալթիկների օգնութեամբ միայն լողալ կարելի է։ Վերջապէս ուրիշ շատ տեղերից այստեղ են թափւում բաղմաթիւ արագիններ, սագեր և բաղեր։

Ավերից հարաւ, երկրի աւելի խորերում սկսում է ցուրտ ու մեռած տունդրան, ողորմելի՝ աշխարհ... այստեղ սաստիկ ցուրտ ձմեռն 9 ամիս է տեսում։ ամառը ձիմնը հաղիւ է հալում, որից յետոյ երկում է ճաշճոտ և անպտուղ հողը, որ մի արշին խորութեան վրայ քարի չափ ամուր և սառուցի պէս սառն է. ի՞նչ կարող է աճել այսպիսի անսպէսք տեղում։ ուշ կարող են կերակրել Սիրիրի ու Ամերիկայի տունդրաները. բայց կեանքը հեշտութեամբ ընդհատուել չգիտէ. տունդրան էլ մամուռով ու քարաքոսով է ծածկուած, որոնք կարող են նոյնիսկ ամենաքիչ կեր եղած տեղում աճել։ Նոյնիսկ բարը նրանց սնունդ է տալիս, ուր մնաց տունդրան։

Իսկ մենք զիտենք, որ ուր բժյակը են երկում, այնտեղ կենդանիներ ել են յայտնւում. ձիշտ է, տունդրան կենդանիներով շատ աղքատ է, բայց փասան այն է, որ նրանք կան։ Սիրիրի տունդրաներում

արածում են բազմաթիւ հիւսիսային եղերուներ,  
որոնց կերակուրը միմայն մամուռն է:

Հետո որ ամառը վրայ է հասնում, իսկոյն ամեն  
կողմից այստեղ են շատապում բազմաթիւ թռչուններ,  
որոնց յետեկց գալիս են նաև փոքրիկ դաղաններ՝  
քաղցրացնելու իրանց քիմքը թէ, պտուղներով, թէ  
թռչուններով։ Տունդրան այդ ժամանակ բոլորովին



Նկ. 15. Եղերուով ծանապարհորդութիւն։

կենդանանում է. Երեսում են նոյն իսկ փոքրիկ ծուռ  
ու մոռա ուռիներ ու կեշիներ։ Զարմանալին այն է,  
որ տունդրայի ամայութիւնից չէ քաշուել նաև մար-  
զը, և բնակութիւն է հաստատել այստեղ։ Միքրի  
տունդրաներում շրջում է սամոնզը (самоходъ), որի  
ամենահաւատարիմ ընկերն ու բարեկամը շունն  
ու եղերուն են։ Եղերուն նրան հաղցնում, կերակ-  
րում և ման է ածում, իսկ շունը ստացուածքն է  
պահպանում։ Սամոնզն ամառն այստեղ փոքրիկ

թռչուններ ու կենդանիներ է որսում, իսկ հիւսի-  
սային ծովերի ափերին կամ ձուկն է որսում, կամ  
փոկեր ու ծովացույեր է սպանում։

Ամերիկայի տունդրաներում թափառական,  
վայրենի է սկիմոսներ էլ կան, որոնք իրենց ողոր-  
մելի խրճիթ ապաստարանները ձիւնից են շնում։  
սրանք ձիւնի վրայ սղաններով ու սահնակներով



Նկ. 16. Կակիմոսներ։

շատ լաւ են ման գալիս. սահնակներում եղերու-  
ների փոխարէն չներ են լծում. իսկ եղերուններին  
գեռ չեն կարողացել ընաելացնել, զբա համար էլ  
աւելի ողորմելի կեսնք են անցկացնում։ Քան թէ  
սամոնզները։

Տունդրաներից հարաւ, որ համեմատարար առե-  
լի տաք է, բնութիւնը մի փոքր կենդանանում է։  
Ճահիճներին հետզհետէ մեծ, բաց տարածութիւն-

ներ են փոխարինում, որտեղ մի տեսակ խոտեր,  
նոյն իսկ խոշոր փշատերև ծառեր էլ են աճում:

Այստեղ բաւական քանակութեամբ գնողներ  
են ապրում, որոնք իրենց տաք և փափուկ մորթու  
համար շատ լաւ և թանկագին որս են, այդ պատ-  
ճառով ամեն տարի մեծ քանակութեամբ առնողներ  
են լցում այստեղ, որոնք տեղայիններից բեռներով  
մորթի են առնում:

Սակայն այդ գաղանների իսկական հայրենիքը  
Սիրիի աայգան և Հիւսիսային ամերիկայի Խիտ  
անտառներն են: Տայգան մի կատարեալ անտառա-  
յին ծմակ է, ուր խիտ առ խիտ կանգնած են սօսի,  
եղենի, կռւենի և ուրիշ շատ ծառեր: Այստեղ մեծ  
աեղ է բռնում փշատերև ծառերի անտառը, որ  
երբեմն անանցանելի է լինում, ծառերի հաստ և  
ուղիղ բները ծածկուած են լինում մամուռով ու  
քարաքոսով, իսկ լայնանիստ ձղներն իրար խառ-  
նուած լցոսի առաջն են կտրում: Տայգայում խոր  
լոռութիւն և զարմանալի մթութիւն է թագաւո-  
րում: բայց ոչ ուշադրութեամբ զիտողն այստեղ էլ  
կեանք կտեսնի. ահա ձեզ ձղնից ծիւզն թռչկոտող  
ոկիւռը (ճելկա), յետոյ երկրորդը, երրորդը...  
ծառերի մէջ դժուարութեամբ թռչկոտող փայտ-  
մորիկը (տերեվա), հեռուում կաքաւն է կոկր-  
ում, իսկ թփերի տակից, ահա, դուրս է նայում  
խորամանկ աղուէսի դունչը.—բայց... ահա անտա-

ոի խորքից աղմուկ ու ձրձրթոց է լսում: այդ ի՞նչ  
բան է. ծառե՞ր են արդեօք կոտրաւում, թէ տայ-  
գայի մշտական բնակիչը—կատաղի արչն է որսի  
գուրս եկել. ոչ դա գայլերից փախչող եղնիկն  
է. սա եղչերուի մեծութիւն ունի, ճիւղաւորուած  
սլողերով. փախչում է զլուխը ցած բռնած. մի քա-  
նի վայրկեան ես, և ահա նա թագնուեց, իսկ հա-



Նկ. 17. Քաւթառ:

լածող գայլերը մնացին ձեռնունայն. մնում է միայն  
զիշերին սպասել, երբ գողանալն աւելի հեշտ և ա-  
ւելի յարմար է: Ահա և զիշերը. տայգայում նոր-  
նոր ձայներ են լսում: զիշերային բնակիչներն են  
գծերս սողում իրենց բներից. քնած են անտառի  
հաւերը, կաքաւները, քնած են սկիւռները և նա-  
պաստակները. քնած չեն միայն գաղաններն ու գի-  
շատող թռչունները. աղուէսն զգուշութեամբ, զողի

պէս, քնած նապաստակին է մօտենում, իսկ կզնաքիւր (կүնից) ճղան վրայ կուչ եկած սկիւռին. բուն մի փոքրիկ թոշնիկ է խեղդում, իսկ բուէծը տխուր է և անբաւական, որովհետեւ գեռ ոչինչ չէ կերել. արտուծի (можевелникъ) տակից էլ քաւթառն (рысь) է գունչը զուրս հանել. ատամները կրծտայներով, կատաղի աճքերը չռած, ականջները սրած, մաղիները պատրաստ պատռելու՝ նա սպասում է իր որսին: Այսպէս է տայգան:

Որքան գէպի հարաւ, այնքան տայգան աւելի է նօսրանում: փշատերեւ ծառերի շարքում տերեւաւորներ էլ են երեսում; տեղ տեղ նոյնիսկ մեծ, կանաչ թալաներ (поляна) են երեսում, որտեղ գարի և հածար են բոււնում; իսկ հիւսիսում սրանցից ոչ մինը չկար: Ակաւում է տերեւաւոր ծառերի անտառը. մենք մտնում ենք Եւրոպայի, Ասիայի և Ամերիկայի միջն գօտին. կանգ առնենք և աեսնենք թէ այստեղ ո՞վ է ապրում և ինչ է բումում:

IV.

Այս մասն ամենախիտ բնակուած տեղն է. այստեղ կիման ընդհանրապէս լաւ, է-ոչ շատ տաք է և ոչ էլ շատ ցուրտ. ձմեռը թէպէտ սառն է և ձիւնոտ, բայց երկարատեւ չէ. ամառը տաք է, աեղ աեղ նոյնիսկ տօթ. գարունն ու աշունն էլ անձրեային են: Աշխարհի այս գօտին նոյնիսկ խիտ անտառներ

է ունեցել բայց մարդը կարտել, այրել ոչնչայրել է դրանց, որպէսզի իրեն համար քաղաքներ ու գիւղեր շինէ, մարդագետիններ ու վարելահողեր ձգէ, երկրագործութեամբ ու խանարածութեամբ պարապէ: Այդ է պառձառը, որ անտառներն այստեղ գլխաւորապէս սարալանչերում են ֆացել: Միշն Ասիայի, Ռուսաստանի, Արևմտեան Եւրոպայի և Հիւսիսային Ամերիկայի շատ հարթութիւններ այժմ մարդագետիններով ու վարելահողերով են ծածկուած. անտառներն այստեղ թուով քիչ տարածութեամբ էլ փոքր են: Բայց դրա փոխարէն լեռների գոշերն ու մեծ գետերից մի քանիսի հովիտները զարդարուած են հրաշալի անտառներով: Այստեղ հսկայ կաղնին ու մանրատերեւ թեղոշը միասին են բուսնում. ածում են նաև նշենի, հացի, բարդի և թաւշանման ու անուշահոտ լորենի:

Անտառների փէշերում, կամ ճանապարհների կողքերին ընկած են փոքրիկ տխլուտներ (օքֆինիկъ). թալաններում փուռած են սպնի, մամլի, մասրի, յաճախ երեսում են նաև մենաւոր, վայրի տանձենիներ ու խնձօրենիներ:

Դուրս գանք այս անտառներից և նայենք մեղ շրջապատող գաշտերին, մարդագետիններին ու արօտատեղերին: Մշակուած գաշտերում բուսնում են ոչ միայն հածար, գարի ու վարսակ, ոչ այդ ամենը ցուրտ գօտու հարաւային մասերումն էլ կան. այլ

և վուշ, կանեփի և գարնան ցորեն. պակաս չեն նաև կորեկը, ճակնդեղն ու ծխախոտը: Բարեխառն-տաք գոտու հողերի մի մասը բռնում էն պարտէղներ ու բանջարանոցներ, որտեղից ամեն տարի մեծ քանակութեամբ ձմբուկ, սեխ, արմախք, վարոնդ ու դլում է ստացւում: Բացի դրանից զիւղերում ու քաղաքներում մրգատու պարտէղներ կան, ուր աճում էն զանազան տեսակի խճորենի, տանձենի, կեռասի և ուրիշ շատ ծառեր: Որպիսի մեծ տարբերութիւն այս հողերի և հիւսիսոյին տունդրաների մէջ:

Որքան աւելի գեպի հարաւ ենք իշնում, այնքան բուսական աշխարհն աւելի է հարստանում, մինչոր հասնում ենք տաք գոտուն: Այստեղ ձմեռ շատ կարծ է, ձիւն շատ քիչ է գալիս, իսկ ամառն ընդհակառակն երկար է և շոգ. շուտ-շուտ անձրենաւ էն գալիս, դրա համար էլ հողը բաւական խոնաւ է, այս արգաւանդ երկրների լեռների փեշերում ու դաշտերում աճում են շատ մշտագալար ծառեր—ուղղաձիղ կիպարիսներ, վառ կանաչ մրտենիներ, դափնիներ: Հարաւի այս ծառերը, ինչպէս և հիւսիսիներ: Հարաւի այս ծառերը, ինչպէս և հիւսիսիներն ու եղենին միշտ կանաչ լինելու պատճառով մշտագալար են կոչւում: Այստեղ մեծ գետերի ափերին, ցրտերից լեռներով պաշտպանուած տափարակներում աճում է նաև խաղող:

Եւրոպայի հարաւում, Ղրիմում, Կովկասում,

Տէրեկի, Դօնի, Արաքսի և Կուրի ափերում մեծ քանակութեամբ այդիներ կան, որոնք զանազան տեսակ խաղողներ են տալիս, որոնցից ընտիր զինիներ են պատրաստում: բացի խաղողից, այդ պարտէղներում ծիրան, դեղձ, շաղանակ, ընկոյզ և է բուսնում: Եւրոպայի ծովափնեայ երկրներում, օրինակ Իտալիայում, լիմոնն ու նարինչը նոյնքան առատեն, որքան մեզանում բողին ու կարտոֆէլը: Տեղեր էլ կան, ուր մարդիկ ցորեն բոլորովին չեն ցանում, այլ միայն խաշած կամ տապակած միմնդրով են ապրում: Նրա ալիւրից հաց կամ բիթներ են թխում: իսկ տերեններով ու ցողուններով անասուններին են կերակրում: Այդպէս են ապրում օրինակ Իմերէթի բնակիչները, որովհեաւ հողն այնտեղ շատ անպատող աղքատ է, իսկ սիմինդրն իրու սակաւապէտ բջյու ապրում է, և այդպիսի հողում, բաւական է միայն, որ որոշ լցու և տաքութիւն լինի: Տաք երկրների մի ուրիշ բոյսը - բրինձը մի քանի երկրներում: օրինակ Զինաստանում, ցանեում է մեծ քանակութեամբ: Զիացիների համար խաշած բրինձը նոյնն է, ինչ որ մեզ հոմար ցորենի հացը:

Բարեխառն-տաք գոտու կենդանիներն աւելի բազմաթեսակ են, քան թէ ցուրտ գոտունը. մենք գիտենք արդէն, որ որքան կերակուրը շատ և բազմաթեսակ լինի, այնքան էլ շատ ու բազմաթեսակ կլինին կենդանիները. ափսոս միայն, որ այս գոտում

անտառները ոչնչացրել են, չետևաբար ոչնչացած պիտի լինին նաև կենդանիների շատ տեսակներ. յամենայն գեղս բուսականութիւնն այստեղ աղքատ չէ:

Անտառների խորքերում թափառում են շատ գաղաններ—արջեր, գայլեր, չաղալներ, աղուկներ և ուրիշ շատ փոքրիկ ու հանդարտ կենդանիներ: Հետաքրքիր է մանաւանդ մեր անտառների խսկական բնակիչը—սև արջը և ամերիկայի անտառների մոխրագոյն արջը, որ սեխց աւելի մեծ և վտանգաւոր է:


Այստեղ որսորդը կարող է պատահել նաև եղջերուի մի ուրիշ տեսակին—աւելի գեղեցիկ և հանդիսատ, որին անտառի գաղանները շարօւնակ հալածում ու նեղացնում են: Պակաս հալածուած չեն նաև քարայծը կամ վիթը և քօշը, որոնք ապրում են լեռնոտ տեղերում, բարձր ժայռերի վրայ և կերակրում են հիւթալի խոտերով, թփերի ու ծառերի նորածիլ ոստերով:

Անտառների փոքրիկ արարածների—ճագարների, սկիւռների, նապաստակների և կաքաւների համար ամենավտանգաւոր թռչուններն են արծիւր,



18. Քարայծ.

որ իր բունը հիւսում է բարձր և անմերձենալի ժայռերի վրայ, բազին և ուրուրը, որոնք այնքան յանդուգն են և վտանգաւոր, որքան և արծիւր,



19. Քոշ.

մանաւանդ գաշտային աղաւնիների, սորեակների, մշահաւերի և ուրիշ սրանց նման փոքրիկ թռչունների համար:

Արանց համար պակաս վտանգաւոր չէ նաև  
բռն, որ գողի պէս միայն գիշերը—միւսների խոր



20. Արծիւ.

քնի մէջ եղած ժամանակն է դուրս զալիս: Ասիա-  
կան վիթերի հոյրենիքում ապրում է նաև մի



21. Եակ.

աեսակ եղն, որ եակ է կոչում: Սա մեծ, խոտա-  
կեր կենդանի է, որ երկար պոչ ունի. ասիայում


արան ընտելացրել և իբրև բեռնակիր են զործ ածում:  
Նոյնքան համբերատար ու խեղճ չէ եակի մօ-  
տիկ ցեղակիցը—ամերիկայի կատաղի բիզոնը. կար  
ժամանակ, երբ այդ բրդուա զլխով, վայրենիները  
մեծ խմբերով արածում էին չիւսիսային Ամերի-  
կայի դաշտերում: բայց հոդիկները և զանազան տե-  
ղերից եկած որսորդները ոչնչացրել և դեռ շարու-



22. Բիզոն.

նակում են ոչնչացնել զրանց, այնպէս որ բիզոն  
այժմ շատ քիչ է մնացել. եղածներն էլ չիւս. Ամե-  
րիկայի խուլ և անմատչելի անկիւններն են քաշուել:  
Արժէ յիշել նաև երկու ուրիշ կենդանիների—  
երկսապատանի ուղարք, որ միջին Ասիայում  
ծանրութիւններ է տեղափոխում և Ամերիկական  
լաման, որ փոքրիկ ուղտին շատ նման է և նոյն-

աղէս բեռնակիր է։ Աշաւ թէ որոնք են բարեխառն—  
տաք գօտու ամենայայտնի կենդանիները։



23. Երկսապատ ուղու.

Ես չթուեցի 'ի հարկէ,  
այն բազմաթիւ դա-  
զանները, թռչունները, մի-  
ջատներն ու սողունները,  
որոնք ձեզ ամենիդ լաւ  
յայտնի են. որոնք գուք  
շատ անդամ էք տեսել  
անտառներում, դաշտե-  
րում; լճերի և գետերի  
ափերին։

Ո՞վ չէ վայրենի սագերի  
ու բագերի խմբեր տեսել  
լճերի ու գետերի ափերին,

որտեղ նրանք ձու են դնում և ճուա են հանում. ո՞վ

չէ դժնէ մի անդամ  
տեսել բարակ ոտ-  
ներով արագիլ  
կռունկ, գեղեցիկ,  
երկարավիզկարապ  
և անձոռնի հաւա-  
լուսն. ո՞վ չէ լսել  
սարեակի, մշահա-  
ւի ու ծիծեռնակի  
ճուռոցը. ո՞վ չէ



24. Լամա.

լսել, թէ ինչպէս է փորում վայտը սև, կարմրա-  
գլուխ կտցահարը, ինչպէս են գեղգեղում բարձր երկն-  
քում արտօւարը, իսկ անտառում սոխակը. վերջա-  
պէս ո՞վ չէ զուարձացել գյոն-զգոյն թիթեռներով,  
կանաչ ծղրիտով, նախշուն բգէզներով և ուրիշ տնթիւ,  
անշամար միջատներով, որոնք անհոգ վիստում են ամեն  
ժամանակ թէ ծաղկազարդ գարնանը, թէ ամա-  
ռուայ տաք օրերին։ Այս կենդանիներին մենք ծանօթ  
ենք. որոնք բարեխառն—տաք գօտում ամեն տեղ  
կան։

Ասիայի հարաւային մասը, (Արաբիա, Հնդկաս-  
տան և Հնդկաչին) գրեթէ ամբողջ Աֆրիկան, Աւստ-  
րալիայի հիւսիային կէսը և Ամերիկայի միջին մասն  
ընկնում են երկրագնդի տաք գօտում։

Այս գօտին կուսական անտառների թագաւո-  
րութիւնն է. ոչ մի տեղ չէք հանդիպի բոյսերի  
այնպիսի բազմութեան, որպիսին այստեղ է. զրանք  
շատ զարմանալի են թէ իրենց գյոնով, թէ ձեռով,  
թէ գեղեցկութեամբ։ Այստեղ զանազան տեսակ  
արմաւենիներն ու փիլի կները (պարտիկъ)  
իրար են խառնուած։ Պատաղի ծը (լանա) և ու-  
րիշ շատ բոյսեր ծառերի բնին ու ծղերին կանաչ  
լախտի նման փաթաթուած ոլորում, խառնում են  
նրանց և սեղմելով, խեղառում են նրանց մատաղ ծի-  
լերն ու շառաւիղները։ Նրանք կանաչ օձի պէս  
Ճիւղից ճիւղ սողալով, նրանց մօտեցնում, միացնում

Են իրար և մի վրան են կաղմում: Շատ բռյակը կարծէք օդի մէջ են կախուած, բայց իսկապէս մեծ ծառերի բներին փաթաթուած, իսկ արմատները նրանց կեղեփ մէջ մոցրած, ծծում են նրանց հիւթը:

Մի քանիսն էլ կանաչ դորգի պէս խոնաւ հողն են ծածկում: այստեղ խոտերը, թփերն ու մեծ ծառերը

մի ամբողջութիւն են կաղմում: մինչև իսկ վայր

ընկած, կոտրած մեծ ծառերի բներն ամեն կողմից շրջապատող կանաչի ու ծաղիկների մէջ, չն երեւում: Ամեն ինչ այստեղ խառնուած ու հիւսուած, կարծես օրօրւող կանաչի ծովլ լինի, որտեղ պարզ որոշում են հազարաւոր գոյներ — կարմիր, կապոյտ, կանաչ, գեղին, սպիտակ և այլն:


Միթէ հարկաւոր է ասել, որ այսպիսի մի հարուստ երկրում հազար տեսակ կենդանիներ կարողին կերակրուել:

Այժմ տեսնենք թէ ինչ է կատարւում Աֆրիկայի տաք գօտում:

Այս երկրի հիւսիսյին մասն աւագոտ և կենսագուրկ մի երկիր է. երբեմն միայն միահիթարական




26. Ջալլամ.



անկիւններ են երեսում, ուր բունումէ խուրմայի ծառը, այդ անապատներում սովորաբար միասապատ ուղարքի կարաւաններ են շրջում, երբեքն էլ թռչուններից ամենախոշորը և ամենից զարմանալին չայլաֆն է երեսում. սա թռչել չգիտէ, բայց հրաշալի փաղող է. թռերը շատ փոքր են. նա 4 արշն երկարաթիւն ունի, ուժեղ է և յարձակուելիս լաւ տքացի տալ գիտէ, բայց յիմար է և փախկոտ:

Անապատից հարաւ նախ խոտառէա մարգա-



27. Վալլի ծի.

դետիններ, իսկ  
աւելի հարա-  
ւումնաեանան-  
ցանելի և մթին  
անտառներ են  
երեսում: Գար-  
նանն այդ մար-  
գագետինները

նման են մեծ

ծաղկանոցների, որտեղ բազմութիւ խոտակերներ իրանց համար կեր են դանում: Այսաեղ, ահա, բայց դաշտերում վայրի ձին է (ԿՎԱՐԴԱ) չափ ընկնում. նա երկարաբաշ առիւծից է փախչում, որ Աֆրիկայի գաղաններից ամենակատաղին և ամենասարսափելին է: Վերջապէս այստեղ են ինձը, յօվազը, և այլ գաղաններ, որոնք թփերի յետեկց կամ բարձր խոտերի միջից աչք տնկած յետեռում են վայրի այծե-

թին, որոնք սպառնացող վտանգին անտեղեակ՝ հանգիստ արածում են կանաչ մարգագետիններում: Այս խոշոր գաղաններից մի փոքր հեռաւում հանգստանում է բծաւոր բորենին (пятнистая гиена), որ կերակրումէ առիւծի, յովազի և ընձի արքայական ձաշի մնացորդներով: Այստեղ—թէ՛ անտառի խորքում, թէ տափարակ գաշտերում, թէ գետերի միջու ու եղէգնոտ ափերում եռումէ կեանքը. այստեղ կարելի է պատահէլ ամենահետաքրքիր կենդանիների: Յանկարծ տեսնումէս ան-


տառից երեաց ամեչի մի փիդ, որ իր երկար կնճիմը եռանդով այս ու այն կողմն է գարձնում. սա փորձուած առաջնորդն է, որին հետեւումէ մի ահազին խումբ,

28. Բծաւոր բորենի.

որ երբեմն հարիւր կամ աւելի փղերից է բաղկացած լինում: սրանք դէպի ծառերի հսկան - լայնանիստ բաօբարն են գնում, նրա ստուերում հանգիստ առնելու: Բայց ահա, միքանի բուզէ չանցած լսուումէ մի կատաղի գոռոց. փղերն իրար անցան. առաջնորդն ականչները դէպի ձայնը գարձրեց և ահա անտառից դուրս վաղեց հաստամորթ, մեծագլուխ և լայներախ մի ահազին կենդանի: Անշնորք կերպով այս ու այն կողմն օրօրուելով ցատկելով ու գոռալով փախչումէ այդ այլանդակ հրեշը և շտապումէ թագնուել



Հալածող թշնամուց. Դա ձիագետին (բեղեմոտъ) է, որին հալածումէ ռնդեղջիւրը, որ վազումէ որսի ետևից պլուխը քաշ դցած, արիւնոտ ու չար աչքերն



29. Ձիագետի.


այս ու այն կողմ դարձնելով և վայրենի աղաղակով՝  
կտրելով ամբողջ դաշտը՝ նրանք նորից կորան  
անտառում, որտեղ այդ ժամանակ մի անպատճելի



30. Ռնդեղջուր.


ծիծաղ - հոհոց բարձրացաւ. կապիկներ են դրանք,  
որոնք ճղնից ճիւղ են շտապում տեսնելու՝ թէ ինչո՞վ  
կվերշանայ այդ երկու հրեշների կափւր։

Բայց կուողներն արդէն կորան անտառի խոր-  
քում, ոտքի հանելով անտառի բոլոր խաղաղ բնա-



31. Խոզուկ.

կիներին։ Խոզուկը (дикобразъ) փախաւ թփի  
տակ մտաւ. Երկիւղից մոռանալով, որ ինքն իր



32. Կոկորդիլոս.

սուր փշերով էլ կարող է պաշտպանուել թշնամուց։  
Լուեղին նաև թռչունները, որոնք մի քիչ առաջ

գլրդեցնումէին անտառն իրենց աղմուկով, երգով  
ու ծլւցով:

Ա.Փրիկայի տաք գօտում ուրիշ շատ կենդանի-  
ներ էլ կան, բայց ես միայն զլխաւորները յիշեցի:  
Զմոռանանք նաև 2 սաժէննոց կոկորդիլուր,  
որ մի ամենի խլեզի նման է և ապրումէ Ա.Փրիկայի  
միքանի գետերի ափերում.



33. Կործ.

յիշենք նաև կործ (գրիֆъ)  
հսկայ թռչունը, որ ապ-  
րումէ բարձր լեռներում  
և կերակրումէ լէշով:

Ամերիկայի տաք գօ-  
տում մի փոքր ուրիշ տե-  
սակ է: Մեծ ու փոքր  
անտառներում կեանքը  
երբէք չէ լուսմ. երկարագի  
կապիկներն ամբողջ օրը  
ճղնից ճիւղ ցատկելով ու-

կախուելով՝ ծամածռութիւններ են անում, իսկ  
մի քիչ հեռուում քնած է ծուլամորթը (լենի-  
ւեց, тихоходъ, pradypus), որ մի շատ ծոյլ կեն-  
դանի է. նա ամբողջ օրը թաթով ծառից կախուած  
է, և միայն շարժումէ այն ժամանակ, երբ կերա-  
կուր ճարելու համար պէտք է մի ճիւղից միւս  
անցնել:

Երկարագունչ մրջնակ երն էլ (մորավъ єдъ).  
մրջնանոցի առաջ նստած և լեզուն նրա մէջ կոխած  
սպասումէ, թէ եր՞բ պիտի բաւական մրջիւններ  
ժողովուեն իր լեզուի  
վրայ, որ նրանցով իր  
քիմքը քաղցրացնէ:

Զրահաւորն էլ  
(броненосецъ). իր բնի  
առաջ հանգիստ պառ-  
կած է պոչն ու զլուխն  
իրան քաշած: Իսկ ամեն  
կողմից թռչունների ձայ-

ներ են լսում. ահա, այնտեղ, արա կոչուած գոյնզգոյն  
թռութակն է ծառին իսկում իր մեծ կտուցով. այս-  
տեղ ոսկեփայլ մշահաւնէ (иволга) զիլ հնչում. իսկ



35. Մըջնակեր.

կանաչների ու ծաղկիների մէջ կուիբը իներն են  
թռչկոտում. սրանք թռչունների մէջ ամենից փոք-  
րիկներն են, որոնց գոյնզգոյն գեղեցիկ վետուրներն  
արեի տակ վառւումեն թանկագին քարերի պէս:

Եւ այդտեղ, ուր օդի մէջ այդ սիրուն թռչուններն են ճախրում, հեշտութեամբ կարելի է ընկնել 3 սամէննոց ամեջի վիշապի վրայ, որի համար մի մեծ հորթի փաթաթուելն ու փշրելը ճնշն բան է:

Այստեղ միշտ պիտի զգուշանալ ծղրտող օձից.  
(гримучая змея). Հակառակ դէպքում մաշն ան-

խուսափելի կլինի:

Կեանքը նոյնն է  
նաև խոտաւէտ մար-  
գետիններում, ուր եր-  
բեմ Ճաշիճներ, եր-  
բեմ փոքրիկ անտառ-  
ներ, երբեմն էլ բու-  
օսկան թագաւորու-  
թեան մենաւոր հօկա-  
ներ են երեսւմ:  
Թփերի մէջ հանդարտ  
է անում Ամերիկայի




36. Կոլիբրի.

Չայլամը—նանդուն, որ թէւ փոքր է Աֆրիկայի շայլամից, բայց և այնպէս խոշոր թռչունն է: Բարձր,  
անապատների վրայից թռչումէ մի ուրիշ մեծ թրո-  
չուն—վարազահաւը (кондор): Սրա թեւերի մի  
ծայլից մինչեւ միւսը 5-6 արշն է և կարողանումէ  
գեանից 6-8 վերստ բաձր թռչել:

Շատ անդամ էլ այստեղի դաշտերում երեսւմ  
են ամերիկական 2 մեծ գաղաններ եագուար և

պումա, ահա ձեզ եագուարը—ամերիկական վագրը,  
որ փաթաթուել է ջրային խողին—տաք գոտու  
վայրենի խոտակերներից ամենից մեծին:

Պուման ուրիշ կերպ անբաշ առիւծ էլ է կոչում:



37. Վիշապ.

Պէտք է ասած, որ Աֆրիկայում դայլեր ու արշեր  
չկան. չկան նոյնպէս ոչ բրդոս առիւծներ, ոչ վա-  
գրներ. այստեղ առաջինին փոխարինումէ պուման,  
իսկ երկրորդին՝ եագուարը:



Տետաքրքիր է այն, որ  
Ամերիկայում մի տեսակ  
կոկորդիլոս է ապրում ալլի-  
դատոր անունով. ուս նոյն-  
քան մեծ է և ահարկու, որ-  
քան և Աֆրիկայի կոկոր-  
դիլոսը:

Աչա ձեղ Ամերիկայի և  
աֆրիկայի զիսաւոր կենդա-  
նիսերը:


38. Ամերիկայի ջալամ—  
Նանդու.

Բայց մի բան շատ զար-  
մանալի է—երկու տեղ էլ կենդանիներն ապրում են  
միանման տաք գոտում, վայելում են միատեսակ կա-  
նոնաւոր կերակուր, երկուսն էլ տաքանում են արեւի  
միակերպ տաք ճառագայթներով. ուրեմն ինչո՞ւ են  
նրանք այդքան տարբերում իրարից. ինչո՞ւ այդ  
աշխարհներից իրաքանչիւրն իր յատուկ կենդանի-  
ներն ունի: Նայեցէք առաջին նկարին. Աֆրիկայի և  
Ամերիկայի մեջ տեղում մի ովկիա-  
նոս կայ. ուրեմն երկու աշխարհ-  
ների բոյսերն ու կենդանիներն  
իրարից բաժանուած են մի ան-  
սահման ծովային տարածութեամբ.  
կարող էին միթէ այդ կենդանի-  
ները մի երկրից միւսն անցնել և  
խառնուիլ իրար. իհարկէ ոչ օրկ.



39. Կարաղանաւ.

փղի համար որքան էլ Աֆրիկան նեղ և կերակրի կողմից  
անբաւարար լինէր, այնուամենայնիւ նա Ամերիկա-  
յում յայտնուել չէր կարող. նշյնը պիտի ասել և  
միւս կենդանիների համար. Ամերիկացիների համար  
որքան էլ նեղ լինէր իրենց հայրենիքն, որքան էլ  
նրանք նեղուէին թշնամիներից, այնուամենայնիւ



40. Եագուար.

Աֆրիկայ անցնել չէին կարող սյլ կամ պիտի իրանց  
տեղերում մնային, կամ պիտի անցնէին այնպիսի  
երկրներ, գէալի ուր բաց և ազատ ճանապարհներ  
կան: Հարց է ուրեմն-ինչո՞ւ Ասիայում այնպիսի  
կենդանիների ենք պատահում, որոնցից Աֆրիկայում  
էլ կան. որովհետեւ Աֆրիկայից Ասիա աղաւ կարելի  
է անցնել: Միենայն սպիտակ արջերը, ծովահորթերն

ու եղերուները պատահում են թէ չիւսիսային Ամերիկայում և թէ Ասիայում: Այդ երկու երկրներն իրարից բաժանուած են նեղ ծովով, որտեղից լողալանցնեխ այնքան էլ դժուար բան չէ: բացի դրանից այդ



41. Պուման.

ծովը երբեմն ծածկում է սառուցով, որի վրայից անցուգարձ միշտ կարող է լինել: Ինչու վերջապէս մի բարձր լեռնաշղթայի մի երեսում ապրող կենդանիներն այնքան էլ նման չեն միւս երեսում ապրողներին:

Պէտք է ենթադրել, որ դա առաջ է գալիս նրանից, որ շատ կենդանիներ սարն անցնել չեն կարողանում: Ասիայում չիմալայեան անունով մի բաձր լեռնաշղթայի կայ: որի բարձր դագաթները միշտ ձիւնով են ծածկուած: Եւ ինչ էք կարծում: ոչ միայն այդ լեռների մի երեսում ապրող կենդանիները, այլ և բյուերը բնաւ նման չեն միւս երեսում ապրողներին: Հնդկաստանում, չիմալայեան սարերի առաջ արմաւինի ու բանանի խիտ անապներ և խոտաւէտ մեծ դաշտեր կան, որտեղ ապրում են կապիկներ, գջնգդոյն ֆասիաններ, ամեն տարի 1000 աւոր մարդիկ թունաւորող օձեր, կոկորդիլոսներ և ուրիշ շատ կենդանիներ, որոնք իրարից տարբերում են թէ կազմուածքով, թէ բնաւորութեամբ, թէ նիստ ու կացով կրկնում եմ—այս բոլորը միայն չիմալայեան սարերի առաջ, Հնդկաստանում: իսկ այդ սարերի ետեւում—Տիբէթում և Մանջուրիայում, բոլորովին ուրիշ տեսակ է: Այդ երկրներում կամ աւագոտ անապատներ են, կամ բաց դաշտեր, ուր կամ օձեր ու խլեներ են ապրում, կամ քաղցած վագրներ են թափառում, կամ




42. Ակնոցաւոր օձ.

կենդանիներ, որոնք իրարից տարբերում են թէ կազմուածքով, թէ բնաւորութեամբ, թէ նիստ ու կացով կրկնում եմ—այս բոլորը միայն չիմալայեան սարերի առաջ, Հնդկաստանում: իսկ այդ սարերի ետեւում—Տիբէթում և Մանջուրիայում, բոլորովին ուրիշ տեսակ է: Այդ երկրներում կամ աւագոտ անապատներ են, կամ բաց դաշտեր, ուր կամ օձեր ու խլեներ են ապրում, կամ քաղցած վագրներ են թափառում, կամ

չաղաների մի խումբ է մօտենում որևէ լէշի, որ կործն ու սեագրաւն են քրքրում: Ընտանի կենդանիներից այստեղ ապրում են միայն երկսապատանի ուղար և եակը:

Տեսնում էք տարբերութիւնը որքան մեծ է. և այդ բոլորը միայն նրա համար, որ բազմաթիւ կենդանիներ, որոնք շատ կուզեին իրանց բնակութեան տեղից հեռու գնալ, չիմալայեան սարերն սնցնել չեն կարողանում:

Պարզ է, կարծեմ,  
որ եթէ մի երկրից մի  
ուրիշն անցնելլ հեշտ  
լինէր, բնակիչներն էլ  
գոնէ փոքր չափով  
նման կլինէին իրար.  
իսկայնաեղուր բարձր  
սարեր, ընդարձակ



43. Ասիական Փիղ.

անապատներ, մեծ ծովեր ու սվեխանուներ են ընկած,  
այնտեղ անցուգարձն էլ կամ դժուար է, կամ իսպառ  
անկարելի. այդտեղ նման կենդանիներ էլ կամ  
շատ քիչ կալատահեն, կամ բոլորովին չեն պատահիլ:

Աւստրալիան դրան ամենալաւ ապացցյն է,  
սա թէ Ասիայից, թէ Աֆրիկայից և թէ Ամերիկայից բաժանուած է ծովերով արդեօք կայ նմանութիւն Աւստրալիայի և միւս երկրների բնակիչների մէջ. բոլորովին ոչ այդ երկիրն իր տարօրինակ բջյու-

քով և կենդանիներով միայն ապշեցնել կարող է; Ոչ մի տեղ դուք չեք տեսնիլ այն, ինչ որ այստեղ կայ:

Վերցնենք հէնց այդտեղի անտառներ ինչ բաներ  
են դրանք, անտառ, պարտեղ թէ ծառասատն—  
սկզբում դժուար է որոշել այդտեղ դուք կտեսնեք



44. Վագր.

իրարից պատկառելի հեռաւորութեամբ կանգնած  
բարձր է կվալիպ տներ. կարծես դիտմամբ այդպէս հեռու-հեռու տնկուած լինին. իսկ այդ ծառերից մի փոքր հեռուում ձգւում է թփերի մի ահագին շարք. այդտեղ միանգամայն անանցանելի է, որովհետեւ թփերն իրար շատ մօտ են. շատ անդամ սարերը, ցողուններն ու տերենները իրար խառնուած,

իրար հետ հիւսւած։ Մի ուրիշ տեղ կա՞ր այսպիսի  
բան։ Զկան այստեղ ոչ միայն առիւծ, փիղ, վագր,  
արջ և գայլ, այլև եղերուներ, վայրի այծեր, նա-  
պաստակներ, ճաղարներ, սկիւռներ և ուրիշ սրանց  
նման կենդանիներ որոնք միւս բոլոր աշխարհներում  
մեծ քանակութեամբ կան։

Ուրեմն ո՞վ է ապրում այս անտառներում։


Կ Ե Ն Գ Ո ւ Ր Ո ւ — ահա  
այդ երկրի սովորական,  
խոշոր կենդանին. զյու-  
խը փոքրիկ, առաջին  
ոտները կարծ, իսկ  
յիտինները երկար, պոչը  
երկայն և հաստ։ Էգերը  
փորի վրայ կաշուէ պարկ  
էլ ունեն. ահա կենդու-  
րուի առաջին անդամից



45. Կենդուրու.

աչքի ընկնող առանձնայատկութիւնները։

Կենդուրուն միւսների պէս չէ կարողանում  
չորս ոտների վրայ ման դալ. բայց դրա փոխարէն  
հրաշալի ցատկումէ, երբեմն 3-4 սաժէն ոստիւն-  
ներով։ Էդ կենդուրուն ծնելուց յետոյ ձագը թագց-  
նում է փորի վրայի պարկում։ այդպէս նա ման է,  
ածում ամեն տեղ մինչև ձագի մեծանալը, որն այդ  
պարկում նստած կերակրումէ մօր կաթնով։ Աւ-  
ստրալիայի կաթնասունների մեծ մասը պարկա-



46. Տեսարան Աստրալիական։

ւորներ են կոչւում, որովհետև պարզեր ունեն, ուր  
պահումեն իրենց ձագերին:

Պահաս հետաքրքիր չէ նաև Աւստրալիայի մի  
կենդանին—եխիդնա (ехидна, eshidna), որ ողնու  
պէս փշերով է ծած-

կուած և ատամների

փոխարէն թռչունի

կտուցի չափ երկար

դռնչ ունի. ձու է

ածումի իսկ այդ ձուերից դուրս եկած ձագերին  
կաթնով է կերակրում: Առհասարակ Աւստրալիայի  
գաղաններն էլ նման չեն միւս երկների գաղաններին.  
Բնչպէս և թռչունները նման չեն Աֆրիկայի և Ամե-  
րիկայի թռչուններին:

Այստեղի ամենամեծ

թռչունը — կազու-


ար մեզ ծանօթ

շայլամներից փոքր է

և թռչել չէ կարողա-

նում, որովհետև փե-

տուրներն աւելի շատ



47. Եխիդնու.



48. Կազուար.

Երկար ու հաստ մազերի են նման: Այստեղ աղաւնի-  
ները կանաչեն, իսկ արագինները սև, թռութակներ  
էլ կան, որոնք ոչ թէ միայնակի, այլ մեծ խմբերով են  
տապում: Այս երկրի թռչուններից միքանիսն աչքի են  
քննկում իրենց ձայնով, ուրիշներն իրենց գեղեցկու-

թեամբ. կան այնպիսիները, որոնք կատուի պէտ  
մշաւումեն, շատերն էլ լալկան երեխայի պէս ծչում,  
կամ զանգակի պէս դողանչումեն:


Այս ամենն իհարկէ շատ տարօրինակ է և բո-  
լորովին նման չէ միւս երկրում եղածներին: Իսկա-  
պէս Աւստրալիան աշխարհի մի զարմանալի անկիւն է:

## VII.

Այժմ՝ ուշադրութեամբ նայենք տաք գոտու-  
միքանի բջյուրին:

Աֆրիկայում մի տեսակ ծառ է ածում, որ  
բաօբար է կոչում: Սա երկրագնդի ամենամեծ  
ծառն է, որ յայտնի է ոչ այնքան իր բարձրութեամբ,  
որքան հաստութեամբ: Մեծ բաօբարն այնքան  
հաստ է լինում, որ 15 մարդ հազիւ կարող են նրան  
շրջապատել. պարզ է, որ այսպիսի հսկայ ծառն  
ածելու համար տարածութիւն էլ պիտի ունենայ—  
դրա համար էլ բաօբարն ածում է մեն մենակ, բաց  
դաշտում: Նրա ամեն մի ճիւղը մեր ամենամեծ կաղ-  
նու չափ է. տերենները շատ խիտ են, ունի հրաշալի  
ստուեր: Այս ծառը մի կանաչ վրանի է նման, որի  
տակ հարիւրաւոր մարդիկ ու կենդանիներ կարող են  
տեղաւորուել: Մեծ բաօբարների բնում երեխն  
փշակ է գոյանում, ուր Աֆրիկայի վայրենիներն իրենց  
ընտանիքով և ունեցած — չունեցածով բնակութիւն  
են հաստատում: Բաօբարը մի տեսակ պտուղ է տա-

իս, որ մեր սեխին շատ նման է, բայց շատ էլ ախորժելի համ չունի. դրանով կերակրում են կապիկները, որոնք մեծ խմբերով ապրում են այդ ծառի ճղերի վրայ: Բաօբաբը շատ երկար է ապրում, երբեմն 2-300 տարի. այսպիսիների փչակում մօտ 200 մարդ աղատ տեղաւորուել կարող են:



49. Բաօբաբ.


Իրեւ խոշոր բոյս յայտնի է նաև հնգկաթղթ ենին (Индийская смоковница), որ ապրում է Ասիայի տաք գոտում—Հնդկաստանում, որտեղից են անունն է ստացել: Մենք սովորենք բոյսերի արմատները հողի մէջ տեսնել, բայց Հնդկաթղթենին այն հազւադիւտ բոյսերից է, որոնք ունեն նաև օդային արմատներ. Նկարին նայեցէք և դուք կը

տեսնէք տարօրինակ սիւներ, որոնք ամեն կողմից պահում են ծառի մեծ-մեծ ճղերը. այդ հենարաններն անհրաժեշտ են, որովհետեւ ծառի ահագին կատարն այնքան ծանր է, որ միայն դրանցով կարելի է պահպատել նրան. ահա հէնց այդ հենարաններն ել նրա օդային ճղներն են, որոնք ահաթէ ինչպէս են առաջանում—հաստ ճղերի կեղեր տեղ-տեղ ուռչում, գուրս է ցցւում: այդ ուռչոցքները յետոյ ճեղքում, ցողուններ են տալիս, որոնք աճելով ու հաստանալով հասնում են գետնին ու մանում են հողի մէջ: Այդպիսի օդային արմատներ յաձախ շատ են լինում—նայած իհարկէ ծառի մեծութեանը: Այնպիսի հնդկաթղթենիներ կան, որոնք մինչև 1000 այդպիսի հենարաններ են ունենում: Զարմանալի չէ ՚ի հարկէ, որ փիղն այս ծառի տակ նոյնքան փոքր է երեսում, որքան նապաստակը մեր գարաւոր կաղնու տակ:

Թէ բաօբաբը, թէ հնդկաթղթենին օգտակար ծառեր են: Աֆրիկայի բնակիչները բաօբաբի տերեներն ու արմատները չորացնում, և յետոյ իրրե գեղխմում են չըով. իսկ հնդկաթղնենու պառւղներն ուտում են հնդկաստանում:

Տաք զօտու բաղմաթիւ բոյսերից առանձնապէս գեղեցիկ են արմաւենիները, որոնք մեր երկրի բայց օդում ապրել չեն կարող. մեզնում նրանք պահւում են չերմանոցներում կամ հարուստ տնե-

ըում իբրև զարդարանք. լաւ և մեծ արմաւենին-  
մեղնում միքանի հարիւր ռուրլի գին է ունենում  
և մեծ հոգացողութիւն է պահանջում. ինչ խօսք,  
որ մեր երկրի ամենամեծ արմաւենիներն անգամ-



50. Արմաւենիներ.

Համեմատաբար ոչինչ են նրանց հետ, որոնք աճում  
են իրանց մայր հայրենիքում, բնութեան ազատ  
ծոցում:

Ասիայի, Ամերիկայի և Աֆրիկայի տաք մասե-  
րում շատ տեսակ արմաւենիներ կան, բայց դրան-

ցից ամենաշետաքրքիրները կօկոսեան առմաւե-  
նին և խուրման են որոնց մասին արժեկ միքանի խօսք  
ասել:

Աֆրիկայի հիւսիսում նեղ ու երկար, բայց  
արդաւանդ մի երկիր է ձգում,  
որին տեղացիք Բէլէդ — էլ —  
չէրիդ են ասում. գա խուրմայի  
հայրենիքն է. այստեղ խուրմայի  
ահազին անտառներ կան, որոնց  
տեղացիք շատ լաւ են խնա-  
մում, որովհետեւ այդ բոլորը  
նրանց համար նոյնն է, ինչ որ  
հացը մեզ համար: Խուրման պա-  
տահումէ նաև Աֆրիկայի ամե-  
նամեծ անապատում — Սահա-  
րայում. նա շոգից չէ վախենում.  
Ընդհակառակն՝ այդ նրան հար-  
կաւոր է. գրա համար էլ ամեն  
տեղ, նոյն իսկ Աֆրիկայի ամե-  
նապատահաներում: ուր  
միայն աղբիւր կայ, այդ ծառը

շատ լաւ զարգանում և առատ պտուղ է տալիս.  
այս ուղղաձիգ, գեղեցիկ ծառը զգեր բոլորովին չունի.  
նրա բունն ուղիղ է և յարդ. ունի 5-10 սաժեն  
բարձրութիւն և գագաթին խիտ աերեների մի փունչ-  
տերն մի մեծ, կանաչ փետուրի է նման, որ երբեք

մօտ 2 սաժէն երկարութիւն է ունենում: Հէսց  
այդ տէրևների տակ էլ կախված էն նրա պտուղ-  
ների մեծ ողկոյզները:

Այդ պտուղներով էլ կերակրում էն Աֆրիկայի  
այդ մեծ անապատի թափառաշրջիկները. թէ՛ թարմ,  
թէ՛ չորացած խուրման ոչ միայն համեղ, այլև սրն-  
նդարար է: Չորացրած խուրման ծեծում, ալիւր են  
գարձնում: Նրանից շինում են նաև մի համեղ խմիչք,  
որ նման է մեր գինուն. իսկ երբ դա թթվում է,  
քացախ է գառնում: որ նոյնպէս պէտք է գալիս:  
Աֆրիկայում այդ ծառի բունն ու տէրևներն էլ են  
պէտք գալիս:

Այս արմաւենին Ասիայումն էլ է բուսնում:  
Խուրման Աֆրիկացու համար շատ թանկ բանէ.  
իսկ տաք գոտու ծովափնեայ տեղերի և կղզիների  
բնակիչները գնահատում եւ պահպանում են կօկոսիան  
արմաւենի: Այս ծառը զլխաւորապէս աճում է  
Աֆրիկայի, Ասիայի և Հարաւային Ամերիկայի ծո-  
վափերում: որտեղ օդը տաք է և խոնաւ: Կօկոսի  
բունը ուղիղ է և բարձր, երբեմն մինչև 15 սաժէն.  
սա էլ ճղերի փոխարէն միայն մեծ, փետրանման  
տէրևներ ունի, որոնք ծառի գաղաթին մի փունչ  
են կազմում: բայց կօկոսի պտուղները երբէք նման  
չեն խուրմային. այդ պտուղները փոքրիկ կաղամբի  
մեծութեամբ ընկոյզներ են, որոնք մեր կողմերն էն  
են բերւում և շատ թանկ գնով ծախւում: Կօկոսեան-

արմաւենին հարազատ մայր է իր շուրջն ապրող ժո-  
ղովրդի համար. նրա բնից են շինում տների պա-  
տերը. նոյն բնից տախտակ են քաշում, որից շինում  
են սեղաններ, աթոռներ, նստարաններ, արկդներ և  
ուրիշ կարասիներ. նրա տէրևներով ծածկում են տա-  
նիքները, նոյն տէրևներից շինում են հովանոցներ,  
առագաստներ, զիւսում են մնդուկներ և կողովներ.  
պատրաստում են երկար և ամուր թելեր, որից գոր-  
ծում են ցանցեր, գորգեր, իսկ աւելի նուրբ թելերից  
նաև զգեստի նիւթեր: Մինչեւ իսկ կօկոսի ամուր  
կեղեն իգուր չէ կորչում: Նրանից էլ ամաններ, փարչեր  
ու անօթներ են շինում: որոնց մէջ կերակուր, ջուր,  
գինի, քացախ, կաթ և իւղ են պահում: բայց հետա-  
քրքիրն այն է, որ թէ՛ քացախը, թէ՛ գինին, թէ՛  
կաթը միենոյն ծառից են ստանում: Մարդիկ կօկո-  
սի թարմ ծիլերը կտրառում եւ կերակրի մէջ իբրև  
ամենահամեղ արմոտիք են գործ ածում: ծառի տէրը  
ճեղքում է նրա բունը, որտեղից մեծ քանակու-  
թեամբ մի տեսակ հիւթ է ծորում: որ յետոյ շատ  
լաւ գինի է գառնում: նոյն գինին թթվացնելուց  
յետոյ հրաշալի քացախի է փոխւում: նոյն հիւթից  
օղի և շաքար է պատրաստում: Այժմ տեսնենք  
թէ պտուղներից ինչ են շինում.

Քանի գեռ ընկոյզը խակ է, նրանից մի տեսակ  
հեղուկ է ծորում: որից թթվուաշ և բաւական գուրե-  
կան մի խմիչք են պատրաստում: իսկ երբ նա հասունա-

նումէ, այդ ժամանակ նրանից կաթն և իւղեն ստանում: կաթն իբրև խմիչք է գործ ածւում, իսկ իւղով կերակուր են եփում, կամ տները լուսաւորում: Վերջապէս կօկոսի տերևներից թուղթ էլ են շնում:



52. Բանան.

որի վրայ զրումն նոյն ծառի թեփից պատրաստուած թանձով:

Մեր ջերմանոցներում և հարուստների տներում պահումէ տաք երկրի բյուերից մինը—բա-

նանը. սա արդէն ոչ թէ ծառ, այլ միամեայ խոտանման մի ահագին բյոյս է. միամեայ եմ ասում, որովհետեւ իր հայրենիքում նա մի տարուց աւելի չէ ապրում: Բանանը խոշոր բյուերից է. իրենց մեծութեամբ առանձին զարմանք են պատճառում նրա տերևները, որոնք երբեմն մի սաժէն երկարութիւն են ունենում: բանանի գագաթին ութերորդ ամսում երեսումէ հասկը, որի մէջ 2-300 պտուղներ են լինում: այդ պտուղները, որոնք սկզբում կանաչ իսկ հասնելուց յետոյ դեղին են լինում: տեսքով շատ նման են մեր վարունդին, հասնելուց յետոյ հասկը կտրումէն և բանանը կարելի է ուտել. նրանք շատ համեղ և անուշահոտ են լինում: խակ-խակ էլ կարելի է ուտել, միայն թէ այդ դէպքում պիտի խաշել կամ տապակել: Բանանի պտուղները մենք իբրև քաղցրաւենի ենք գործ ածում, իսկ այնուեղ ուր նա բուսնում է, այդ չորացրած պտուղներից ալիւր են պատրաստում: որին տաք երկրի բնակիչները շատ թանկ են գնահատում: հինգ դրա համար էլ նրանք մեծ խնամքով են մշակում բանանը: ասենք դրա մշակութիւնը հաղար անդամ աւելի հեշտ է մեր հացահատիկների մշակութիւնից:

Համեմատաբար աւելի քիչ խնամքի է կարօտում հացի ծառը, որ նոյնպէս տաք և ծովափնեայ տեղեր է սիրում: Հացի ծառը շատ մեծ չէ. նա ծածկուած է խիտ ճղերով, որոնց վրայ կախկխուած

են հաստամիրթ պտուղներ. այդ պտուղներից իւրաքանչիւրը կօկօսի չափ է և 2-3 ֆունտ է կշռում. նրանք հում-հում էլ են ուտուում. դրա համար էլ հինգ ծառը «հացի» է կոչում:

Այս ծառի պտուղներից տեղի վայրենիները բլիթներ են շինում և իրեւ հաց գործածում:

Տաք երկրներում ուրիշ շատ բոյսեր էլ կան, որոնք շատ մեծ օգուաներ են տալիս, բայց նրանցից իւրաքանչիւրի մասին առանձին առանձին խօսելը մեզ շատ հեռու կը տանէր. ում չէ յայտնի սուրճը, թէյր, մեխակը, կառւչուկը, քինաքինան, որոնց ծառերն աճում են ատաք երկրներում. իսկ ինչից են պատրաստում կոլէնկորը, քաթանը, փաթուսխան. — բամբակից, որ ամենից լաւ տաք երկրներում է աճում որքան մարդիկ են պարապում բամբակի մը-շակութեամբ, որքան ձեռքեր են ջոկչկում, մաքրում ու մանում բամբակը. բամբակից միլիոնաւոր մշակներ ամեն տեսակ գործուանքներ են պատրաստում — արժան, թանկ, սպիտակ ու դյոնզգոյն: Միմիայն Անգլիայում մօտ 3000 բամբակի գործարաններ կան տասնեակ հազար մանող ու գործող մեքենաներով, այդ գործարաններում բանի՛ միլիոն մշակներ են բանում: Զարմանալի չէ, որ այստեղ տարեկան 7—800 միլիոն ռուբլու գործուանքներ են պատրաստում, և այդ բոլորը միայն բամբակից:

Բամբակ բուսնումէ նաև մեր երկրում, զլիաւորապէս Երևանի նահանգում:

Շատ բոյսեր էլ կան, որոնց ցողունը քաղցր է լինում: ամենից շատ շաքար պարունակում է իր մէջ եղէղնի պէս մի բոյս, որ շաքար եղէ գն է կոչում: 30—40 տարի սրանից առաջ շաքարն Ուռւաստանում բաւական թանկ էր. այդ ժամանակ գեռ Ճակնդեղից շաքար շինել ընթէին և շաքարն ստացւում էր օտար երկրներից:

Շաքարեղէգն աճում է միայն տաք երկրներում: Այս բոլորն առաջներում շատ թանկ էր նրանում. բայց այժմ շաքարն արժանացել է, որովհետեւ մարդիկ ոչ միայն սովորեցին Ճակնդեղից շաքար սկարպատել, այլ և Ամերիկայում ու Հնդկաստանում Անգլիացիք մեծ քանակութեամբ շաքարեղէգն տարածեցին, սովորեցրին նրա մշակելու եղանակը և հեշտ ու պարզ կերպով շաքար պատրաստելու կերպը:

Այդ երկրների տաք երկնքի տակ շաքարեղէգն հրաշալի կերպով է աճում: Նրա ցողունները, որ սկզբում կանաչ իսկ յետոյ սոկեղջն են լինում; 10—15 ոտն բարձրութիւն են ունենում: ցողունը պատաժ է լինում երկար ու նեղ տերևներով, իսկ կատարին ցցուած են փետրանման փոքրիկ աւելի ներ. այդ աւելները նրա սերմերով լիքը հասկելն են. բայց այդ հատիկները միշտ սերմնացու են նոր են. բայց հատիկները միշտ սերմնացու են նոր

յանքի համար. նրանք ուրիշ բանի պէտք չեն Այն քաղցր հիւթը, որից շաքարն է պատրաստւում, հէնց յօղունների մէջ է: Այդ յօղունները հասնելուց յետոյ կտրում, դիզում և յետոյ լաւ սեղմում են. դատարկ յօղունները վառելիք են գառնում, իսկ ստացած հիւթը պղնձներում եփում, մաքրում և սառցնում են. թանձրանալուց յետոյ նա շաքարաւաղէ տալիս. անշուշտ այս բոլորն այնքան էլ. հեշտութեամբ չէ կատարւում. ես պատմեցի միայն դործի էական մասը: Այսքանը տաք գոտու բոյսերի մասին բաւականէ:

VII.

Տեսէլ էք երբեխէ թռչող մուկն-չղջիկ. մեր երկրում նրանցից բաւական կան, իսկ տաք երկրներում աւելի շատ են:

Չղջիկը մուկն չէ, և ոչ էլ նմանէ նրան. այս փոքրիկ կենդանին թռչող մուկն է կոչում միմիայն նրա համար, որ մարմինը մկան մարմի պէս ծածկուած է խիտ ու կարծ մազով. իսկ թէ ինչո՞ւ է թռչում, այդ ինչպէս ամենքդ էլ գիտէք, նրանից է, որ յետի մատները լայն թաղանթով միացած լինելով, նրա համար թերթի տեղ են ծառայում:

Ասիայի, Աֆրիկայի և Աւստրալիայի տաք մասերում բացի չղջիկների զանազան տեսակներից, կան նաև թռչող շներ: Իշարկէ, սա մեր սովորա-

կան շունը չէ. այլ մի բաւական խոշոր չորքոտանի կենդանի, որ ծածկուած է բրդով. դունչը շատ նըման է շան դնչին, իսկ մատների միջև մաշկ ունի: Թռչող կամ թեաւոր շան գոյութիւնը մեզ զարմանալի է երկում: իսկ Հնդկաստանի և Աւստրալիայի լեռներում նրանց յաճախ կարելի է պատահանձնել:



53. Թռչող շներ.

Չել: Թռչող շունը ցերեկը հանդստանում է ծառերի ճղերից կախուած, իր լայն թեերի մէջ պինդ փաթաթուած. իսկ մութն ընկնելուն պէս, սկսում է ճնների միջով ճարպիկ կերպով դէս ու դէն անցնել:

Այս կենդանու համար առասպելներ շատ են պատմում: իրբ թէ նա յարձակուում է մարդու վրաց

նրա քնած ժամանակը և հենց սրտից սկսում է ծծել նրա արիւնը. շատերն էլ նրան ամենավտանգաւոր մի հրեշ են կարծում, որին սատանան իրեն համար օգնական է ստեղծել. ասողներ էլ կան, որ իր թէ այդ շները մեղաւոր մարդկանց հոգիներն են, որոնք ամենազազրելի արարածների կերպարանքով թափառելով, կծոսում են անմեղ մարդկանց. բայց այս բոլորն էլ անչեթեթ պատմութիւններ են միայն. թռչող շներն ու մկները շատ անմեղ արարածներ են. նրանք երբէք մարդու չեն դիմում և ոչ էլ նրա արիւնը ծծում. այլ կերեկրում են զանազան ծառապառւղներով. նրանց վնասը կայանում է նրանում, որ երբեմն այգիների վրայ ընկնելով շատ պտուղ են փչացնում. բայց չէ որ այդպիսի յանցանք ուրիշ շատ կենդանիներ էլ են գործում. ով նրանց սատանայի ծնունդ համարում։ Տաք Աւստրալիայում շատ պարկաւոր կենդանիներ էլ կան. բայցի կենդուրուից, որի մասին արդէն ասացի, հետաքրքիր են նաև պարկաւոր գայլն ու արջը։

Պարկաւոր արջը միայն իր արտաքինով է նրման մեր արշին. իսկ գայլը թէ արտաքինով, թէ քնաւորութեամբ շատ էլ չէ տարբերում մեր դաշտերի ու անտառների տաղակից—գայլից։ Փոքր հասկ, մեծ զլուխ, տափակ դունչ մանր ու քնկոտ աչքեր, երկար մատներով հաստ ոտներ, անպոչ և բրդոտ—ահա Աւստրալիական արջի արտաքինը։


Նա շատ հանդիսա, քնկոտ, ծյլ, դանդաղաշարժ և յիմար կենդանի է. նրան բարկացնելը հեշտ չէ. այդտեղ էլ կարծես նա ծուլանում է։ Օրերով նա մնում է նստած մի ծառի ճղի վրայ և այնտեղ կամ քնում կամ տերեներ է ուտում. զիշերները երբեմն միայն իջնում և իր սիրած բոյսերի արմատներից հանում; ուտում է։ Արջը պարկաւորէ



54. Պարկաւոր արջ.

կոչւում; որովհետեւ նրա էզր պարկ ունի, որտեղ իր ձագին է պահում։ Նա շատ է սիրում իր ձագին, որին, շարունակ իր պարկում ման է ածում, գին, որին շատ փոքր է. Հենց որ քոթոթը մի փոքր մեծանում է, բարձրանում է մոր շալակը, ամուր բռնում է նրա ուսերից և երբէք չէ բաժանում իրեն կերպակրողից, մինչև իր չափահաս և անկախ դառնալը։

Աւստրալիայի վայրենիներն սպանում են այս արջին իր համեղ մսի և բրդոտ կաշուի համար: Բաւական բնորոշ է այդ որսորդութիւնը, վայրենին բարձրանալով ծառը հալածումէ արջին մինչեւ ծառի կատարը. ապա թափահարում, վայրէ գցում՝ նրան



55. Դարկաւոր գայլեր.

այնտեղից. իսկ ծառի տակ ժողովուածները փայտերով խփում, սպանում են նրան:

Բայց այդքան հեշտ չէ պարկաւոր գայլին սպանելը. սա մի դիշատող, չար և մնասակար կենդանի է. արտաքուստ նման է թէ գայլին, թէ շանը. այդ պատճառաւ պարկաւոր գամփու էլ է կոչւում:

Աւստրալիայի հարաւում մի կղզի կայ Տասմանիա անունով. հենց այս կղզին էլ այդ գայլերի հայրենիքն է: Հարիւր տարի առաջ Աւստրալիայում այս գայլերից շատ կային. բայց եկան այդտեղ Անգլիացիք, սկսեցին թռչնապահութեամբ ու խաշնարածութեամբ պարապել. զիսուեցին լաւ հրացաններով և, սկսեցին ոչնչացնել այդ չար գաղանին. սա էլ քաշուեց այնպիսի տեղեր, ուր մարդու ոտքը չէր կարող հասնել. ահա այդտեղ սկսեց նա քաշ տալ իր օրեղը և միայն գիշերները որսի գուրս գալ: Նրա խոշոր աչքերը յերեկը լաւ չեն տեսնում. նա անվճռական կենդանի է, դրա համարէլ յերեկուայ մեծ մասն իր որչումն է անց կացնում. բայց հէնց մլդնումէ թէ չէ, գուրս է գալիս և գառնումէ մի կատարեալ աւազակ. այդ ժամանակ արգէն նրա աչքերը շատ լաւ են տեսնում. իսքը գառնում է համարձակ, ուժեղ և ծարպիկ: Նրա կերակուրը միսն է. դրա համար էլ յարձակւումէ ամեն տեսակ կենդանու, նոյնիսկ կենդուրուի վրայ: Վտանգի ժամանակ նա շատ չար է և զարմանալի քաշութիւն է յցցց տալիս. պատահում է, որ նա կուի է բռնուում շների ամբողջ վոհմակի հետ և... ոչինչ... նա շատ անգամ նոյն իսկ յաղթութիւն էլ է տանում:

Տաք երկրի կենդանիներից ամենից գեղեցիկը թռչուններն են. և միշտն ասած ոչ մի տեղ նրանք այնքան գեղեցիկ չեն, որքան Ամերիկայի, Ասիայի,

Ա. Փրիկայի և Աւստրալիայի տաք զօտիներում. իսկ Աւստրալիան այդ կողմից մի ուրիշ երկիր է:

Նրա անտառներում այնպիսի թռչուններ կան, որոնցից ոչ մի տեղ չեք պատահիլ. որոնցից շատերն առասպելական գեղեցկութիւն ունին. օրինակ դրախտահաւը, որից Ա. Փրիկայի Մադագասկար կղզում էլ կայ: Դրախտահաւն իր մեծութեամբ հաւասար



56. Դրախտահաւ.

է մեր ճային (галка), իսկ կազմութեամբ նման է աղռաւին. նոյնիսկ աղռաւի պէս կոկոռում է. բայց իհարկէ այդ չէ նրա գեղեցկութիւնը. աղռաւն ի՞նչ է, որ նրա գեղեցկութիւնն ինչ լինի. իսկ դրախտահաւի փետուրների գոյնը.. օ այդ գեղեցկութիւնը գժուար է նկարագրել: Պէտքէ աճամբ տեսնել եթէ ոչ թռչունին գոնէ նրա պաճուճապատանքը (պաշուալո): Այդ թռչունին որ կողմից էլ նայելու լինիք,

կմաք հիացած.-կրծքի ու պարանոցի փետուրների գոյնը մութ-շագանակագոյն է. պարանոցի ցածի մասում կանաչ կողքերից գեղնակարմիր, թևերի վրայ ոսկեգոյն, իսկ թագաձև փրուռուած պոչը կարծես ոսկուց և արծաթից լինի ձուկած: Այս բոլորը միասին արևի պայծառ շողերի տակ վառվումնեւ:

Դրախտահաւերը մի տեղ հանդիսու նստել չեն սիրում: Նրանք անդադար ճղից ճիւղեն թռչկոտում, իսկ մի ճայն լոկուն պէս լուռում և թագնուում են ծառերի տերեների մէջ: Նրանք կերակրուում են միշտաներով ու պառզներով. ցերեկը միայնակ են անցկացնում, իսկ գիշերները խմբեր կազմած զիշերում են ծառերի կատարներին: Թէ ինչպէս են




57. Թռութակ.

Նրանք իրենց բները շնուրմ, որքան ձու են գնում, ինչպէս են ծուռ հանում, պահում նրանց—մարդիկ գեռ չգիտեն, որովհետեւ այնքան նրանք վախկոտ ու անմատչելի են, որ գեռ ոչ ոք նրանց չէ ուսումնահիրել:

Աւստրալիայի անտառներում շատ տեսակ թռռչուններ կան, բայց ամենից շատ թռռթակներն

Են, որոնք այդ անտառների զարդն ու հարստութիւնն են։ Անտառը շարունակ թնդումէ այդ գեղեցիկ թռչունների աղմուկով ու անվերջ շատախօսութեամբ։ Ինչպէս շատերդ էլ դիտէք, թութախներն ուրիշների ձայները շուտ են իւրացնում։ Նրանք թէ հաջում, թէ շացնում, թէ մաւում, թէ կրկում, թէ ուրիշ թռչունների պէս երգումեն։ Հապա որքան գեղեցիկ են, որքան փայլուն ու գոյնզգոյն փետուրներ ունին։ Թութախներ կան, որոնք կամ բոլորովին սե են, կամ սպիտակ, կամ կարմիր, կամ կանաչկամ մոխրագոյն են։ Կան նաև գոյնզգոյն փետրաւորներ։

Թութակը շատ ճարպիկ և ուրախ թռչուն է։ Նա թէ ման է գալիս և թէ շատ լաւ թռչում է։ Նրանք թռչում են խմբերով և պէտք է ասած շատ համերաշխեն։ ամեն խումբ ընտրումէ իր համար անտառի որոշ մաս, որտեղ և դիշերում է։ Հանգստանալու համար նրանց ամենասիրելի տեղը ծառերի խիս կատարներն ու խոր փշանկերն (ՃՍՈԼՕ) են։ Հենց մութն ընկնումէ թէ չէ, նրանք ամեն կողմից դէպի այդ տեղերն են շտապում։ աղմուկ ու կռիւ է, որ սկըսում է։ տեղերի համար նոյն խիս վէճեր ու կռիւներ են տեղի ունենում, մինչև որ վերջապէս ամենքն էլ տեղաւորում ու լուսմեն։ Փորձուածներից միքանիսն արթուն հսկում են, մինչև որ լոյսը բացւում է և խկոյն ամենքն էլ կեր որոնելու են շտապում։ Պտուղներ, հատիկներ, միջատներ, որդեր և



58. Թութախներ.

ծառերի նորածիլ տէրեներ — ահա թութակների  
կերակուրք. բայց ամենից շատ նրանք սիրում են  
արշաւանքներ գործել պաղատու ծառերի և ցանած  
գաշտերի վրայ. այս դէպքում նրանք իսկական գո-  
ղեր են. չէ որ թութակներն առհասարակ աղմկա-  
սէր ու շատախօս են. բայց գողանալիս բոլորն էլ  
լոռում են: Այդ ժամանակ փորձուածներից երկուսը  
մի բարձր ծառի կատարին նստած հսկում են. և  
հենց որ մի որեւէ վտանգ են նախատեսում: իսկոյն  
ձայն են տալիս և ամբողջ խումբը փախչում: թո-  
գնւումէ խոր անտառում:

Պատահէլ է, որ այգու կամ գաշաի տէրը սպա-  
նել է նրանցից մի քանիսին. այն ժամանակ մնացած-  
ները աղմուկով թռել և երկար ժամանակ չեն հե-  
ռացել դիսկի մօտերքից — կամենալով մի կերպ օգնել  
կամ տանել իրենց յանկարծակիի եկած ընկերներին:

Թութակները շատ են սիրում իրար և աշխա-  
տում են միւնցին կամ գոնէ հարեան ծառի վրայ  
բռն շինել: Նրանց զցզը՝ արուն և էզը, սովորաբար  
մինչեւ մահ իրար հաւատարիմ են մնում: նրանք  
միտսին բռն են շինում: ձռ են գնում, ձագերին  
կերակում: մեծացնում ու պահում են: Ոմաւանա-  
կան սէրը նրանցում շատ ուժեղ է. եթէ նրանցից  
մինը սաակամէն միւսն այդ ցաւը տանել չկարողա-  
նալ:



2013



6226

30 4.

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԴՐ ԱՅՍ ՎԻՐԴԻԿԱԳՎԱԶՈՒՄ